

ԻՐԱԿԱՆԱՆ ՄՇԱԿՈՒՄԵՆ

Չկա Հասարակությանը
անունից իրավունք
Ubi societas ibi ius

Երկշաբաթերթ
թիվ 7 (10)
2007 թ. մայիսի 15

ԱՊՐԻԼԻՑ ԶԵՏՈ՝ ՀԱՂԹԱԿԱՆ ՄԱՅԻՍ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԵՐԱՒՏԱԳԻՏՈՒԹՅԱՐ ԵՇԵՑ ՄԱՅԻՍՅԱՆ ԵՐԱՏՈՒՆ՝

գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 62-րդ, Շուշիի ազատագրման և ԼՂՀ պաշտպանական բանակի ստեղծման 15-րդ տարեդարձը:



Ծանր ժամանակներում է ծնունդ առել Արցախի պաշտպանական բանակը: Բանակ, որ անցնելով փառավոր մարտական ուղի՝ մշտապես զգաց Հայաստանի և Ափյուռքի աջակցությունը:



Մայիսի 8-ը Երկրապահի օրն է

Երկրապահներն իրենց ավանդական տոնն սկսում են եռաբլուրից՝ ծաղիկներ ու ծաղկեպսակներ դնելով մարտական ընկերների հիշատակը հավերժացնող հուշաքարերին, հարգանքի տուրք մատուցելով ազատամարտիկ հերոսներին:

Անմահություն, կանգնիր ձեզ հասակով՝
Շիրիմներ կան անհայտ, արձանացիր...

Ես չիմանամ էլ՝ Աստված կիռլի
Արցախի կրծքում իմ սիրտն ես, Շուշի՛ ...

Դրաշես Ասրուբաև

ՀՍԻԿ-ին

խորհրդատվական կարգավիճակ
շնորհվեց



ԵՐԵՔ ՆՈՐ ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ

Ըստ ՀՀ Արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության ՄԱԿ-ի բաժնի ղեկավար Վարսենիկ Բաղդասարյանից ստացված տեղեկատվության՝ 2007 թվականի մայիսյան միստի ժամանակ ՀՍԻԿ-ին շնորհվել է ԵԿՕՍՕԿ-ի խորհրդրդատվական կարգավիճակ:

ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի խորհրդի (ECOSOC) հասարակական կազմակերպությունների հանձնաժողովը 2007թ. փետրվարին հետաձգել էր Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի (ՀՍԻԿ) խորհրդատվական կարգավիճակի ձեռքբերման դիմումի վերաբերյալ որոշման կայացումը, որովհետև Թուրքիայի ներկայացուցիչն ավելի շատ ժամանակ էր խնդրել՝ ուսումնասիրելու ներկայացված տեղեկությունը...

Հայաստանից այս կարգավիճակին առաջին արժանացել է Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիան:

Աշոտ ՀԱԿՈՔԱՆՆ

ՀՍԻԿ-ի հանրային հարաբերությունների բաժնի վարիչ

Մայիսի 1-ին Միավորված ազգերի Գլխավոր քարտուղար Պան Գի Մունը հայտարարեց բնակլիմայական փոփոխությունների հարցերով երեք հատուկ գործակալների նշանակման մասին: Նրանք են Գրո Հարլեմ Բրանդլենդը՝ Նորվեգիայի նախկին վարչապետն ու Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային հանձնաժողովի նախկին նախագահը, Հան Սեունգ-սուն՝ Կորեայի Հանրապետության Արտաքին գործերի նախկին նախարարն ու Միավորված ազգերի զագաթաժողովի 56-րդ նստաշրջանի նախկին նախագահը, և Ռիկարդո Լագոս Եկուբարը՝ Չիլիի նախկին նախագահը:

Գլխավոր քարտուղարը բազմիցս նշել է, որ բնակլիմայական փոփոխությունը համաշխարհային հիմնահնդիք է, և ինքը մտադիր է առաջնային դեր ստանձնել՝ օգնելու միջազգային համագործակցությանը այս խնդիրը հաղթահարելու հարցում:

հասցնում որոշ շրջաններում, հատկապես զարգացող երկրներում և էկոլոգիական համակարգերի մեծ մասի վրա: Տնտեսական գնահատումները ցույց են տալիս, որ անգործունեության գինը մեծապես կգերազանցի կանխարգելող միջոցների արժեքին:

Սկզբնական շրջանում Հատուկ գործակալները կծանոթանան պետության և կառավարության ղեկավարների ներկայացուցչական խմբի տեսակետներին, ներառյալ այն երկրները, որոնք զբլիավոր հանձնակատարներ են բնակլիմայական փոփոխությանն առնչվող բանակցություններում: Հատուկ գործակալների աշխատանքը կօգնի Գլխավոր քարտուղարին՝ կառավարությունների և այլ հիմնական շահագրգիռ կողմերի հետ նրա խորհրդակցություններում, բնակլիմայական փոփոխությանը վերաբերող հարցերի շուրջ բազմակողմանի բանակցությունների առաջընթացի խթանմանն ու զարգացմանը ՄԱԿ-ի շրջանակներում:

Գլխավոր քարտուղարն արդյունավետ աշխատանք է ակնկալում այս երեք միջազգային մեծարժեքի դեկավարությամբ՝ մոլորակի ապագայի համար հույս կարևորություն ներկայացնող հարցերում:

Հանրային տեղեկատվության վարչություն
Նորությունների և Ըրատվածիցների բաժին • Նյու Յորք

«ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱԳԱՆ» ԶԵԿՈՒՅՑԻ ՏԱՐԵՂԱՐՁԸ. ԻՆՉ Է ԱՐՎԱԾ

2007թ. մայիսի 9: Նյու-Յորքի ՄԱԿ-ի գրասենյակում, Կայուն զարգացման հանձնաժողովի 15-րդ նստաշրջանի շրջանակներում, կայացավ բարձր մակարդակի միստ: Այն զուգադիպել է «ՄԵՐ ընդհանուր ապագան» գեկույցի 20-ամյակին և նախապատրաստվել Շրջակա միջավայրի և զարգացման հանձնաժողովի կողմից, որը գլխավորում է Գրո Հարլեմ Բրունդլենդը: Հենց այս գեկույցում են առաջին անգամ որոշվել այն միջոցները, որոնք ուղղված են կայուն զարգացմանն՝ ամբողջ աշխարհում, և, մասնավորապես, աղքատության կրճատմանը, ժամանակակից զգապաշարներն օգտագործելու հնարավորության ապահովմանը և շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Դիմելով միստի մասնակիցներին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը ուշադրություն հրավիրեց այն բանին, որ այդ գեկույցի հայտնվելուց 20 տարի անց 1,6 միլիարդ մարդ ապրում է առանց էլեկտրականության, 2,4 միլիարդը՝ ցայժմ փայտ և այլ տեսակի կենսազանգվածներ է օգտագործում ջերմության ու սնունդ պատրաստելու համար: Իսկ շրջակա միջավայրի աղտոտման ու կլիմայի փոփոխությունները դարձել են մարդկությանն ուղղված ներկայիս ամենաուրախ սպառնալիքները:

Տես՝ էջ 2 →

«ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱԳԱՆ» ԶԵԿՈՒՅՑԻ ՏԱՐԵԴԱՐԶԸ. ԻՆՉ Է ԱՐՎԱԾ

Ալիգոր՝ էջ 1

ՄԱԿ-ի ղեկավարը Եզեց, որ այս տարի հանձնաժողովը ուշադրություն կենտրոնացրել է արդիականության ամենաիրատասալ հարցերին. Էներգիային, արդյունաբերական զարգացմանը, շրջակա միջավայրի աղտոտմանը և կլիմայի փոփոխությանը: «Էներգիան համակողմանի մի հարց է, որը սերտորեն կապված է նստաշրջանի օրակարգի մյուս թեմաներին: Էներգապաշարների օգտագործումն ապահովում է մարդկանց անեծրոյան պահանջներն ու հարմարավետությունը, ինչպես նաև նպաստում է բարգավաճմանը: Բայց մենք հաճախ աշխատում ենք անուն, թե դա ինչ հետևանքներ է ունենում շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության վրա», - հայտարարեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը: Նշելով, որ Էներգիան կարևոր նշանակություն ունի աղբատուրյան չափերի կրճատման և տնտեսական զարգացման համար, Ալիգորը քարտուղար կոչ արեց ավելի շատ ջանքեր քափել Էներգիայի նուրբ աղբի արդյունքների օգտագործման և զարգացման համար: Նա նշեց, որ այդպիսի մոտեցումը կնպաստի աշխատանքներ ստեղծելուն, արդյունաբերական զարգացմանը, շրջակա միջավայրի աղտոտման կրճատմանը և ջերմոցային գազերի նիսիսների նվազեցմանը:

Պաճ Գի Մուրը ընդգծեց, որ կլիմայի փոփոխությունները հսկայական հետեվանքներ ունեն ոչ միայն շրջակա միջա-

վայրի, այլև տնտեսական և սոցիալական զարգացման վրա: «Այդ հիմնահիմքերը պետք է հոգաժողովուն դառնա բոլորի և հարուստ, և աղքատ երկրների համար», - Եզեց Գլխավոր քարտուղարը: Նա ավելացրեց, որ այժմ անչափ կարևոր է, որ միջազգային հանրությունը վճռական գործողություններ ձեռնարկի ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ուղղությամբ: ՄԱԿ-ի ղեկավարը հույս հայտնեց, որ ղեկավարներին կայանալիք կլինայի փոփոխության Շրջանակային համաձայնագրի մասնակից-երկրների Համաժողովում, որը կայանալու է Բալի կղզում, համընդհանուր տաքացման հետեվանքները մեղմելու ուղղությամբ կարևոր որոշումներ կընդունվեն:

Գլխավոր քարտուղարն ընդգծեց, որ ՄԱԿ-ն արդեն վճռական միջոցներ է ձեռնարկում Էներգիայի, կլիմայի փոփոխության, արդյունաբերական զարգացման և շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված հիմնահիմքերը լուծելու ուղղությամբ: Նա նաև ավելացրեց, որ այսօր անհրաժեշտ է այդ հարցերն ընդգրկել գործունեության բոլոր ծրագրերում, ինչպես նաև ամրապնդել միջհաստատությունական և տարածաշրջանային համագործակցությունը այդ ոլորտներում:

«ԿԻ-ՀԱՄԱՆՄԱՐՆՈՒՄՆԵՐ» (* ЭКО-СОГЛАШЕНИЕ)
Շատ ՄԱԿ-ի Տեղեկատվական կենտրոնի նյութերի

ԻՆչ անել, որ Մահմանադրական դատարանի որոշումն անարդյունք չլինի

Չնայած որոշմանը՝ սոցիալական քարտ են պահանջում

«Մահմանադրական դատարանի որոշումից հետո Վազգեն հաջիկյանի շնորհիվ մենք շատ օպերատիվ և նույնիսկ շատ անապասելի ձևով ստացանք մեր երկու տարվա թոշակները: Խնդիրը նպաստների հարցն է: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ասել է, որ դատարանի որոշումը դեռ չի ստացել: Չնայած նախարարությունը հունվարի 29-ին միտս իրավիճակ է որոշեց վճարել մեր նպաստները, բայց պետք է կառավարությունը հաստատի: Կառավարությունն էլ նայել է որոշումը, բայց սպասում է նախագահի վավերացմանը: Ես ինձե՛ս եմ Մահմանադրական դատարան, որ հետևեն իրենց որոշման իրագործմանը: Հիմա որոշ տեղերում աշխատանքի ընդունելիս սոցիալական քարտ են պահանջում, ինչի՞ համար»:

Շատ տեղերում դեռ Մահմանադրական դատարանի որոշումը չեն ստացել՝ չեն ստացել Վազիկի Հարությունյանն ասաց, որ «որոշման օրինակները պետք է տարածվեն ամեն տեղ»,- Մահմանադրական դատարանի (ՄԴ) հայտնի որոշման ոչ հաջող կիրառման մասին գրուցելիս նման կարծիք հայտնեց սոցիալական քարտից հրաժարված և դատական ատյաններում իր իրավունքների պաշտպանության համար մտ իրևույթի ապրապարտ թոշակառու Մամուշակ Քոչարյանը:

Բոլորն էլ ինչու՞ն ենք, թե ինչ մեծ աղմուկ բարձրացրեց 2003 թ. հոկտեմբերի 24-ին ընդունված «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքը: Բնակչության համար պարտադրանք դարձնում սոցիալական քարտերը մեծ դժգոհություն առաջացրին տարբեր կազմակերպությունների մոտ, հատկապես ավիններով ընդունվեց բնակչության այն խավի մոտ, որը սոցիալական քարտերից հրաժարվեց հոգևոր համազունների հիման վրա:

Օրենքը սահմանում էր. «Սոցիալական քարտը քաղաքացիներին հատկացվող փաստաթուղթ է, որի միջոցով ապահովվում է քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքը: Սոցիալական քարտերի համակարգի ստեղծման նպատակն սոցիալական համակարգերում անհատական տվյալների մշակման ընթացքում քաղաքացու նույնականացումը (ինքնուիժիկացումը), օրենսդրությամբ սահմանված կազմակերպությունների կողմից սոցիալական փոխանցման գործընթացների կանոնակարգում, բարելավումը և քաղաքացու անհատական տվյալների գաղտնիության ապահովումն է»: Հոգևոր համազունների հիման վրա սոցիալական քարտերից հրաժարվեցին բազմաթիվ մարդիկ, որոնք քարտերը որակյալն սատանայական ինչ-որ բան, որով հնարավոր է վերահսկել մարդկանց: Եվ քանի որ սոցիալական քարտերը պահանջվում էին քաղաքացիական գործարքների իրականացման համար, սոցքարտ չստացողները զրկվեցին նաև իրենց եկամտի աղբյուր հանդիսացող աշխատավարձերից, կենսաթոշակներից, նպաստներից:

Այսպիսով, եկամտի միակ աղբյուրից՝ կենսաթոշակից զրկված հասարակության այդ հատվածը հայտնվեց դատական պաշտպանության ղեկավար գործը հանձն առավ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը (ՀՄԿԿ):

ՀՄԿԿ-ի շնորհիվ երեք տարվա քաշքշուկից հետո սոցիալական քարտերի գործը հասավ Մահմանադրական դատարան, որն ընդունեց շրջադրամային որոշում: ՄԴ-ի հոկտեմբերի 4-ի թիվ 649 հայտնի որոշմամբ սոցիալական ապահովության քարտերի մասին ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները ճանաչվեցին հակասահմանադրական: Ուժեղ կործանող ճանաչվեցին նաև սոցքարտերը քաղաքացիներին պարտադրող բոլոր ենթաօրենսդրական ակտերը: Այսինքն դա նշանակում է, որ սոցքարտերն այսուհետ կանավորվեն և որևէ քաղաքացիական գործարք ժամանակ անհրաժեշտ չեն: ՄԴ-ն իր այդ պայմանական որոշումը կայացրեց կենսաթոշակառուներ Մամուշակ Քոչարյանի և Հրանուշ Ղազարյանի անհատական գործերը քննելիս: Բորշումն ուժի մեջ

մտավ իրապարակման պահից: Նախաձեռնությունը հաղթանակով ավարտած ՀՄԿԿ-ի ներկայացուցիչներն ուրախությամբ մշել էին, որ շուրջ 20 ամիս կենսաթոշակներից, աշխատավարձերից, նպաստներից զրկված քաղաքացիների իրավունքներն այսպիսով կվերականգնվեն, և նրանց կվերադարձվի իրենց տարիների վաստակը:

ՄԴ-ի որոշումից հետո, մեր տեղեկություններով, կենսաթոշակառուները հիմնականում ստացել են իրենց չստացած կենսաթոշակները: Սակայն խնդիրներ են առաջացել նպաստների հարցում, ինչը սույն իրապարակման սկզբում հաստատեց Մամուշակ Քոչարյանը: Սոցքարտի հետ կապված խնդիրներ են առաջանում նաև այլ պարտավորումներ, ինչպիսիք են աշխատանքի ընդունվելու, ինչ-որ գործարքների ժամանակ սոցքարտ պահանջելու հանգամանքները և նման այլ օրինակներ: ՀՄԿԿ-ի ներկայացուցիչները և սոցքարտերից հրաժարված մարդիկ դժգոհ են, որ, փաստորեն, Մահմանադրական դատարանի որոշման առկա է, բայց անընդունյալ չի կիրառվում:


ՀՄԿԿ-ում դեռևս քաղաքացիների բազմաթիվ բողոքներ են ստացվում պետական և ոչ պետական տարբեր մարմինների կամայականությունների մասին. ապօրինաբար շարունակվում են սոցքարտ պահանջում, և չեն կիրառվում օրենքում, հրաժարվում են որևէ վճարում կատարել:

«Իրավական մշակույթ»-ի մարտի 15-ի համարում «Կիրառվում է արևմտյան, որքանով նպատակահարմար է ոճանց» վերառությամբ ծավալուն իրապարակման մեջ մշվում է, որ այս իրավիճակի պատճառով այն է, որ ֆիզիկական անձինք, գործատու այն է, որ ֆիզիկական կազմակերպությունները ՄԴ-ի որոշման ընկալել են ոչ միատեսակ, ինչն էլ պայմանավորված է պետական տարբեր պաշտոնյաների ու մարմինների իրապարակավ արտահայտած կարծիքներով:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը իր պաշտոնական կայքում տեղադրել է մի տեղեկություն, որում մեկնաբանելով ՄԴ-ի որոշումը՝ նշում է. «Սոցիալական քարտից հրաժարվող անձանց հնարավորություն կտրվի իրենց իրավունքներն իրականացնելիս յուրաքանչյուր դեպքի համար սոցիալական քարտի փոխարեն ներկայացնել սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանք»: Հետևել է առաջարկված է քաղաքացիներին՝ ձեռնպահ մնալ սոցքարտերից հրաժարվելուց, մինչև խնդրի վերջնական լուծումն ապահովող համապատասխան իրավապահ ակտերով փոփոխություններ և լրացումներ կատարվեն:

ՄԴ-ի ընդունած որոշումը, ինչպես նշվեց, պետական գանձամբ մարմիններ տարբեր կերպ սկսեցին մեկնաբանել: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որպես առաջին շահագրգիռ կողմ, հասկանալի պատճաններով անենաշարյան է իր մեկնաբանություններում: «Նախարարության բոլոր մեկնաբանությունները, ընդունած որոշումներն ու ակտերը (բազառությամբ 2007 թ. հունվարի 29-ի ՄԱԿ-ի ընդունված թիվ 1-3745/2-4 որոշման) ոչ այլ ինչ էին, եթե ոչ հանրությանը մոլորության մեջ գցելու քայլեր: Իր պաշտպանական էղում տեղադրված հայտարարությունը, հեռուստատեսության տրված պարզաբանումները, ՀՀ կենտրոնական բանկին տրված պաշտոնական պարզաբանումը, մեղմ ասած, սեփական լիազորությունները գերազանցող գործողություններ են», նշում է հողվածի հեղինակը՝ միաժամանակ ընդգծելով, որ նախարարությունը իրավասու չէ մեկնաբանել ՄԴ-ի որոշումը կամ դրա վերաբերյալ պարզաբանումներ տալ: Նախարարությունը պարզապես պետք է կատարեր այդ որոշումը՝ մշակելով ու ներդրելով նաև այլընտրանքային այնպիսի մեխանիզմներ, որ սոցիալական քարտ չստացած քաղաքացիներին վերաբերող սոցցապահովության նպատակով անհատական տվյալների հավաքումն իրականացվել մարդկանց սահմանադրական իրավունքների երաշխավորմամբ:

Գոհար Գեվորգյան



Շատ «Միջազգային համաձայնում» կազմակերպության գլխավոր քարտուղար Այրին համի մահապատժից գերծ աշխարհի առկայությունը հնարավոր է, եթե կառավարությունները զանկանաճ քաղաքական բարի կամք դրսևորեն...

«Միջազգային համաձայնում»-ը կոչ է անում՝ համընդհանուր վերացնել մահապատժից: Միայն 6 երկրներ (Իրան, Իրաք, Մուսուլ, Պակիստան, ՄԱՆ և Հինգամբու) պատասխանատու են 2006թ. -ին իրագործված մարդասպանությունների 90%-ի համար: 1997թ. -ին 16 երկրներ վերացրեցին մահապատժից՝ անկախ հանցագործության բնույթից: 10 տարի է արդեն, ինչ այդ երկրների թիվը շարունակում է աճել, որը մահապատժից վերացնելու գրավականն է: 2006 թվականին Ֆիլիպինները վերցրին երկիրն էր, որ համալրեց մահապատժից վերացում 99 երկրների թիվը: Շատ այլ երկրներ, այդ թվում և Հարավային Կորեան, արդեն թվաբանել են այդ ուղին:

Աֆրիկայում 2006-ին միայն 6 երկրներ են, որ կիրառել են մահապատժից: Բելուժուս Եվրոպայի միակ երկիրն է, որ դեռ շարունակում է իրագործել մահապատժից, ինչպես նաև որ Ամերիկայում ՄԱՆ-ը միակն է, որ 2003 թվականից ի վեր մահապատժից է իրագործել:

Համաձայն «Միջազգային համաձայնման» տվյալների, ամբողջ աշխարհում մահապատժիցների թիվը 2005թ. -ի 2.148-ի նկատմամբ նվազել է 2006-ին դառնալով 1,591:

2006թ. -ին առավելագույն թվով մահապատժից իրագործած երկրների առաջատարը Իրաքն է: Մահապատժի կիրառությունը Իրաքում կտրուկ աճել է 2004թվականից սկսած: Այդ ժամանակից ի վեր ավելի քան 270 մարդ է դատապարտվել մահվան: 2004-ին արձանագրված դեպքեր չկան, և առնվազն 3 մարդ մահապատժի է ենթարկվել 2005-ին: 2006թ. ղեկավարներին Սարդան Հուսեյնի կախման ցուցադրությունը հեռուստատեսություններում հասատուում էր այն բանի, որ Իրաքում մահապատժիցների թիվը որսամտիկորեն աճում է. մեկ տարում 65 մարդ է կախվել, որոնցից վերջին 2-ը եղել են կանայք:

Իրանում իրագործված մահապատժիցների թիվը գրեթե կրկնապատկվել է 2005թ. տվյալների համեմատ: 2006թվականին Պակիստանը լրացրեց ամենաշատ մահապատժիցներ իրականացնող երկրների ցանկը՝ 82

սպանված մարդ: Սուդանում մահապատժի է ենթարկվել նվազագույնը 65 մարդ, թեև Իրանում թիվը շատ ավելին է, և 53 մարդ սպանվել է ՄԱՆ-ի հանազանների 12-ում: 2006-ին Իրանը և Պակիստանը միակ երկրներն էին, որ մահապատժի են ենթարկել մանկապատժիցներին:

Չինաստանը շարունակում է մնալ աշխարհի ամենաշատ մահապատժիցներ իրականացրած պետությունը: Միայն 2006-ին «Միջազգային համաձայնում»-ը արձանագրել է 1000 նմանոթիվան ղեպը Չինաստանում: Թեև այստեղ իրականացված մահապատժիցների թիվը պետական գաղտնիք է, սակայն ենթադրվում է, որ իրական թիվը գերազանցում է 8000-ը:

2006 թվականի մահապատժիցների թվաքանակն ամենիցն է: Նույնիսկ Իրաքի և Չինաստանի պետական գործիչներն են խուսում մահապատժից արգելում մասին:

«Միջազգային համաձայնում»-ը ամենապատժիցները ներկայացնում է նաև մահապատժի իրականացման դասան, ամենադժար կարգի դեպքեր:

Երի Լանկացի Ուոլան Կումարան անցյալ տարի մահապատժի ենթարկվեց Քուվեյթում: Ամբիջապես կախելուց հետո հայտարարվել էր, որ նա մահացել է, բայց երբ մարմինը տարել էին դիտործարան, բռնկված անձնակազմը նկատել էր, որ նա դեռևս շարժվում է: Հետագա քննության արդյունքում սրտի թույլ աշխատանք էր նկատվել: Այսպիսով, նա մահացել էր մահապատժի իրագործումից հետո՝ միայն 5 ամս ճան:

Ամենուր առկա է ամենը մարդու մահապատժի ենթարկելու վտանգը: 2006թ. -ին ՄԱՆ-ում մահվան դատապարտված 3 մարդ ամենը ճանաչվեցին:

Ամբողջ աշխարհում շուրջ 20,000 մարդ այժմ սպասում է իր մահապատժի...

Այրին համի խոսքով՝ «Մահապատժից դասան, անմարդկային և նվաստացուցիչ պատժի է: Ապացուցվել է, որ հանցագործությունները նվազեցնելու հարցում այն անարդյունավետ է և ծնուն է բռնության մի այնպիսի մեղուրտ, որտեղ չի կարող երբևէ իշխել արդարությունը: Մահապատժից պետք է վերացվի, և համընդհանուր պարտավորագրեր կարգադրան որևէ ուղղված կարևորագույն քայլերից մեկը»:

Մարդու իրավունքների կրթության ընկերակցություն (HREA)
(«Համաձայնման» մասին հարցազրույց) (Գեվորգյան)

Ընդունված և լրանջակված օրենքներ *խորագրով այսուհետ պարբերաբար կիրառարակենք մեր առօրյային ու կենցաղին առավելագույնս առնչվող՝ ուղղակիորեն կենսական նշանակություն ունեցող օրենքները:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2007 թվականի մարտի 20-ին

«ՄՅՆՈՒՆՈՐՏԻ ՕՐԻ ԴԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Մթնոլորտային օդի պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի(11 հոկտեմբերի 1994 թվականի, ՀՕ-121) 21-րդ հոդվածը առաջին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով.

Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող (վերակառուցվող, քանդվող) օբյեկտների շինարարության ընթացքում փոշու արտանետումների շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով շինարարություն, ինչպես նաև փոշու արտանետման հետ կապված աշխատանքներ իրականացնող կազմակերպությունները դրանք իրականացնելու ընթացքում պարտավոր են՝

ա) պարսպապատել շինարարության հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով.

բ) շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը լվանալ.

* ՀՀԿՍՏ 1994 N 21

գ) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, սորուն նյութերը և շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով.

դ) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս.

ե) հղկման աշխատանքներ իրականացնելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.

զ) սորուն նյութերը(ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.

է) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

Արգելվում է կենցաղային և արտադրական աղբը, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, նրանց շրջակայքում ու դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում և այլ սարքերում:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյան
2007թ. Ապրիլի 10 Երևան

ԲԱՐՈՅՎԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ... ԿԵՑՑԵ՛ ԱՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացվող պատմությունն իր բազմաբովանդակ ընթացքով ուշագրավ է ինչպես իրավական, այնպես էլ բարոյական արժեքների տեսանկյունով:

Նպատակն չդնելով անդրադառնալ իրադարձությունների իրավական կողմին (պատմության հերոսը խնդրո առարկայի վերաբերյալ սպառել է և վարչական, և դատական բոլոր ատյաններին դիմելու հնարավորությունը ընդհուպ մինչև ՀՀ Սահմանադրական դատարան դիմելը) և դա իրավաբանների և իրավագետների դատին հանձնելով, ներկայացնում ենք միայն պատմության բարոյական կողմը:

Մենք չենք մշել պատմության բոլոր հերոսների անունները, որոշ պետական մարմինների հասցեները՝ մի շարք նկատառումներից ելնելով, սակայն նշված բոլոր իրադարձություններն ու անձինք իրական են:

1994 թ.-ից Գյումրու կայազորի թիվ N զորամասի բուժկետում աշխատող բուժքույրը 2005 թ. դեկտեմբերի 1-ին աշխատանքից ազատել են ՀՀ կառավարության 2004 թ. հունիսի 25-ի թիվ 963-Ն որոշման հիման վրա («Ձորամասի բժշկական կետի բուժքույր ծառայող Ցողիկ Կ.-ին ազատել աշխատանքից ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2004 թ. հունիսի 25-ի թիվ 963 որոշման «Սոցիալական ապահովության քարտերի մասին» պահանջները չկատարելու համար» (հրաժարվում է ստանալ սոցիալական ապահովության քարտ): Քաղվածք թիվ N զորամասի հրամանատարի հրամանից:

Եթե զորամասի հրամանատարը իրապես նպատակ ուներ պահպանել իրավական ակտերի պահանջները և ենթարկվել դրանց, ապա պետք է նախ սկսեր պահպանել և կատարել ՀՀ Սահմանադրության դրույթները, այնուհետև ՀՀ օրենքների և վերջապես, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ նաև կառավարության որոշումների: «Օրինակապահ» հրամանատարը նկատել է միայն կառավարության որոշումը. սակայն, այն էլ մասնակիորեն: Նշված որոշումը սոցիալական քարտերի պարտադիր կիրառումը սահմանել էր 2005 թ. հունվարի 1-ից, հրամանատարն աշխատողին գործից արձակել է մույն թվականի դեկտեմբերի 1-ին, այսինքն պահանջվող ժամկետից 11 ամիս անց: Ըստ էության չի պահպանվել նաև կառավարության որոշման պահանջները, սրանից բխող իրավական հետևանքներով:

2006 թ. հունվարի 3-ից Գյումրու կայազորի թիվ N զորամասի բուժկետում աշխատող բուժքույրը 2005 թ. հունիսի 25-ի թիվ 963 որոշման (սոցիալական քարտ չունենալու պատճառով) 2005 թ.-ի Կանանց տոնի առթիվ հատկացված 15000 դրամ Ցողիկ Կ.-ին չի վճարվել նույն պատճառով:

Վերջ նշված բովանդակությամբ հրաման արձակող հրամանատարն արդեն իր նախկին աշխատակցուհուն 2006 թ. հունվարի 18-ին առկա է տեղեկացել հետևյալ բովանդակությամբ. «Տրվում է առ այն, որ թիվ N զորամասի նախկին ծառայող բուժքույր Ցողիկ Կ.-ի ամենկան դրամական բավարարումը կազմել է NNN դրամ, որը չի հաշվարկվել և չի վճարվել 2005 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, համաձայն ՀՀ կառավարության 2004 թ. հունիսի 25-ի թիվ 963 որոշման (սոցիալական քարտ չունենալու պատճառով): 2005 թ.-ի Կանանց տոնի առթիվ հատկացված 15000 դրամ Ցողիկ Կ.-ին չի վճարվել նույն պատճառով»:

Աշխատավարձի չվճարման հարցին չանդրադառնալով

նալով (այն ի վերջո վճարվել է 2006 թ. դեկտեմբերի 28-ին, գրեթե 2 տարի ուշացումով), չենք կարող անուշադրության մատնել նաև «Կանաց տոնի առթիվ հատկացված» գումարի չվճարմանը, չէ որ այն, համաձայնվեք, եթե չասեմ՝ անբարո, ապա գոնե անհարգալից քայլ է:

Տոնական և Հիշատակի օրերը պետության կողմից սահմանվել են մեր ազգի համար որևէ նշանակալից իրադարձություն մշելու համար. պատահական չէ, որ այդ օրերը նաև ոչ աշխատանքային օրեր են: Դրանք բոլորն էլ առանձնահատուկ են, ունեն իրենց խորհուրդը, մեր ավանդական կենցաղում ունեն տասնամյակների պատմություն:

Մայրության և գեղեցկության տոնը առիթ է՝ մեր մայրերին և քույրերին այդ օրն առանձնակի ուշադրություն



դարձնելով, վերաբերմունք ցուցաբերելով, երջանկություն «նվիրելով»: Որպես կանոն այդպես էլ վարվում ենք բոլորս՝ Նախագահը, Վեհափառ Հայրապետը, ամուսիններն ու որդիներս, ամեն մեկս յուրովի: Որևէ մեկս, պետությունը, եկեղեցին, անհատներս մեր մայրերին և քույրերին երջանկություն մտղթելու համար նախապայման չենք դնում, եթե այդ մտղթումը շահախնդիր չէ կամ հետին նպատակներ չի հետապնդում: Հատկացված 15000 դրամը պետության կողմից ի դեմս զորամասի երջանկություն մտղթելու «ձև» է, սակայն ... նախապայմանով: Արդյո՞ք սա բարոյական է: Եթե այո, ապա մարդկության ամենամեծ ոճրագործություններից մեկի գողը դարձած շուրջ երկու միլիոն մեր հայրենակիցների հիշատակին ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում Հարգաբաժնի տուրք մատուցելու երթին միանալու համար և պետք է ներկայացնենք... սոցիալական քարտ: Իհարկե, սա ամենեթե գաղափար է, քայլ մի քանի տարի առաջ որևէ մեկը չէ կարող պատկերացնել, որ Մայրության և գեղեցկության տոնի երջանկության «պայմաններից» մեկը մեր օրերում լինելու է սոցիալական քարտը:

Ինչևէ, չհուսալքված քաղաքացին, հավատալով Հայաստանում իրավունքի և արդարության տիրապետման ոչ անհուսալի վեժ գաղափարին, քրիստոնեական խոնարհությամբ կրկին անգամ դիմում է հրամանատարին խնդրելով իրեն վերականգնել նախկին աշխատանքում («Խնդրում են վերականգնել նախկին աշխատանքում համաձայն 2006 թ. հոկտեմբերի 4-ի Սահմանադրական դա-

տարանի 649 որոշման», մեջբերում 2006 թ. նոյեմբերի 7-ի դիմումից): Ընթերցողին արդեն պարզ է, որ պատասխանը չի բավարարել դիմումատուի խնդրանքը:

Քրիստոնեական արժեքներով ապրող ընտանիքը, երեք զավակների ծնողները, ովքեր իրենց կեցվածքով փորձում են բարձր պահել ընտանիքի պատիվն ու արժանապատվությունը, մեր լեզուն ու մշակույթը, ծառայել հայրենիքին, բարեխղճորեն վճարել հարկերը և տուրքերը, իրավական հոչակված հայրենիքում արդեն շուրջ երեք տարի անիրավ վերաբերմունք են արժանանում:

Ընտանիքի ավագ որդին հայրը բանակից զորացրվել է 2005թ.-ին և չի կարողանում աշխատանքի ընդունվել՝ սոցիալական քարտից հրաժարվելու պատճառով, դուստրն ավարտել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը և չի կարողանում աշխատանքի ընդունվել՝ դարձյալ սոցիալական քարտից հրաժարվելու պատճառով, կուստր որդին պատրաստվում է հայրենիքի նկատմամբ իր սրբազան պարտքի կատարմանը՝ ծառայել ազգային բանակում (այս դեպքում, փառ՞ք Սատոն, բնակամասրա քարտ չեն պահանջի): Իսկ ազգային բանակի հեղինակության հանձվին «արժանի» փոխհատուցում են սույնիս այս զավակներին ծնող և սնող, դատախարակը և հայրենիքի պաշտպանությանը պատրաստող մորը ...

Իրավունքի և արդարության սկզբունքների անտեսմանն ու օրինախախտումների համատարած բնույթին զուգահեռ, մեր հասարակության մեջ շարունակում են ցավալի անկում ապրել բարոյական արժեքները, հազարամյակների պատմություն ունեցող մեր ազգային ավանդույթները:

Վերադառնալով մեր օրվա բազմաթիվ դիմումների և խնդրանքների մերժողական կամ խուսափողական պատասխանները չեն հուսալքում Ցողիկ Կ.-ին, սակայն, ուժասպառ են անում: Ցողիկի մեր խմբագրությունը ուղարկած նամակն ավարտվում է հետևյալ տողերով. «Մեր ընտանիքը ապրում է քրիստոնյա երկրում: Աշխատանքից անօրինական արձակուրդ հետո որևէ մեկին չի հետաքրքրել մեր ընտանիքի ծանր կացությունը: Մի՞թե ավելորդ ենք մեր հայրենիքի համար: Ու՞ր գնանք մեր հայրենիքից: Ու՞ր մնաց պետության սատարելն իր երկրի քաղաքացիներից: Քրիստոնյա ենք, քայք կտորվում ենք քրիստոնյա երկրում՝ հավատքի պատճառով: Ամենուրեք պարտադրում են սատարելի դրոշմը: «Վերջերս սոցիալական քարտ»:

Համոզված լինելով այս պատմության դրական ավարտին, ՀՄԿ-ը ծեռնարկել է համապատասխան իրավական քայլեր Ցողիկի և նրա ընտանիքի անդամների խախտված իրավունքների վերականգնման նպատակով: Շուտով դատարան կներկայացվի հայցադիմում՝ սույն պատմության իրավական հիմնավորումների ապացույցներով, խախտված իրավունքների վերականգնման պահանջով: Արդարադատությունն իրականացնող մարմինը կներկայացվեն նաև բոլոր հերոսների անուններն ու հասցեները:

ԱՐԴԱՐԱՅԻ Վճիռ կայացումը կլինի Ցողիկի բարոյական գրկանքների և չխուսալքված երկարատև պայքարի հատուցումը, իսկ աշխատանքում վերականգնվել կլինի ընդամենը նյութական հատուցում:

Մեր թերթը կներկայացնի նաև պատմության հետագա զարգացման ընթացքը:

Արայիկ ՊԱՊԻՅԱՆ
ՀՄԿ-ի փոխնախագահ



Տափակի ՍԱՐԳՍՅԱՆ

Լոռու մարզ, Վանաձորի թիվ 22 միջնակարգ դպրոցի «Իրավունք» առարկայաչափի ուսուցչուհի

21-րդ դարի իրականությունն այն է, որ աշխարհը մոլորակը հիրավի, դարձել է մեկ ամբողջություն:

Ներկայումս շրջանառվող տերմինը «համընդհանրացում» և համապատասխան կրթագիտող «Մտածող համապարփակ, գործիքի տեղայնացված», հավասարապես վերահսկող միջնակարգ դպրոցի, արդյունաբերության, կառավարման, մշակույթի բնագավառներին, այնպես էլ կրթությանը:

Համընդհանրող կրթությունն արդեն իրականություն է դարձել. դրա նպատակն է սովորողներին նախապատրաստել գաղափարապես համընդհանրող միջնակարգ իրենց տեղը գտնելուն և համապատասխանաբար պատրաստվելուն: Այսօր սովորողներն ու ուսուցիչները հնարավորություն ունեն համապատասխան միջնակարգ դպրոցում սովորելու, ուսումնասիրել այլ երկրների պատմությունը, մշակույթն ու կրթության առանձնահատկությունները:

Դպրոցական կրթության բովանդակությունը

Դպրոց կոչվածը Վանաձորի հուլիների կրթաշնչակրթության կենտրոնի խոնավ ու անհարմար փոքրիկ սենյակն է, որտեղ 12 նստարան կա, մի մաշված գրատասխակ, իսկ պատերին ծեստերի լեզվի տարբերանշաններն են: Կրթաշնչակրթության կենտրոնը 2005թ-ից հետո դրամաշնորհային որևէ ծրագիր չի չափել, սակայն աշխատակիցները կամավոր հիմունքներով աշխատել են մինչև 2006թ-ը: Ցրտերի պատճառով երեխաներին տուն էին ուղարկել, որ գարնանը՝ օրերի բացվելու հետ, կրկին վերադառնային...

Վանաձոր քաղաքում դժվար հաղորդակցվող 47 երեխա և 95 մեծահասակ կա: Երկրաշարժից հետո խոլը երեխաները զրկված են եղել դպրոց գնալու հնարավորությունից, որովհետև բոլոր փաստերը վկայում են, որ խորհրդային տարիներին Վանաձորում դպրոց չի եղել, նրանք հաճախել են երևանի թիվ 15 հատուկ դպրոցը: 2002թ-ին խուլների միությունը Վանաձորի Շինարարական տեխնիկումի, այժմ Գյուղատնտեսական օրվեջի, նախկին հանրակրթական տարածք տրամադրեց և հիմնեց Վանաձորի «խուլների կրթաշնչակրթական կենտրոնը»:

Կենտրոնի շնորհիվ մինչ այդ երբևէ դպրոց չգնացած մինչև 33 տարեկան 30 խուլներ սովորեցին խոսել ծեստերի լեզվով, նրանցից 3-ը Հայաստանում գտնվող օտարերկրացիներ էին: Մեծ Բրիտանիայից, Կանադայից և Շվեյցարիայից: Նրանց հետաքրքրում էր հայերեն տարբերակով ծեստերի լեզվով արտահայտվելու հնարավորությունը: Այնուամենայնիվ կանադացի Մաքսուել Ռիչարդը հետաքրքրվել է հավաքել է Վանադայում ու ԱՄՆ-ում ապրող հայերի խոլ երեխաներին և սովորեցնել ծեստերի լեզուն: Այժմ հայ բոլոր 27 աշխատողներն ազատ հաղորդակցվում են: Կենտրոնում առանձին դասընթացներ են անցկացվել խուլների ընտանիքի անդամների համար: Ինչպես վկայում է կենտրոնի սնորհն Գագիկ Սերոբյանը, կենտրոնը ոչ միայն հնարավորություն տվեց ծնողներին իրենց երեխաների հետ ազատ շփվելու, այլև հոգեբանական գործոնը հարթահարվեց (չափ ծնողներ ամառում էին, որ սահմանափակ կարողություններով երեխա ունեն): Այս խնդիրը դեռևս առկա է գյուղական որոշ համայնքներում: Անաչելու պատճառով նրանք մույնիսկ չեն ասում, որ իրենց համայնքում մնան երեխաներ կան: Խուլների կրթաշնչակրթային

ԸՆԴՀԱՆՐԱՊԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

յունը և ուսուցման մեթոդները նույնպես այսօր կարիք ունեն վերանայման և նոր պայմաններին համապատասխանեցման: Իսկ դրա համար պահանջվում են նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, ինչպես նաև դասավանդման նոր մեթոդներ ու եղանակներ: Անհրաժեշտություն է ծագում ստեղծել նաև նոր ուսումնական ծրագրեր, որոնք կհամապատասխանեն ներկայի և ապագայի պահանջներին: Անհրաժեշտ է նախապատրաստել աշակերտներին՝ արդի փոխկապակցված աշխարհում ապրելու համար, ուստի այնպիսի ուսումնական պլաններ ու ծրագրեր պետք է մշակել, որոնք՝

* ուսումնառության բոլոր աստիճաններում ուսումնական առարկաները դիտարկեն նաև ընդհանրական տեսանկյունից,

* լինեն միջազգայնացված՝ չափափակ ազգային արժեքները,

* բաց լինեն խելամիտ ու օգտակար նոր գաղափարների համար:

Ընդհանրական կրթության գաղափարը ձևավորվել է 1976 թ-ին, երբ Ռուբերտ Հանվելը Միջազգային հարաբերությունների ուսուցման կենտրոնում իր հետազոտությունների ընթացքում հանգեց հետևյալ սահմանմանը. «Ընդհանրական կրթությունն ուսուցանում է ազգային սահմաններից այն կողմ գտնվող խնդիրներ, գիտելիքներ և տալիս էլոլոգիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և տեխնոլոգիական համակարգերի փոխկապակցվածություն մասին: Թեև անհատներն ու մարդկանց խնդրեր կարող են կյանքին տարբեր տեսանկյուններից մոտենալ, սակայն նրանք

միաժամանակ ունեն նաև ընդհանրող պահանջումներն ու ցանկությունները»:

Ընդհանրական կրթությունն արդյունավետ ու գործուն կառուցողական գործընթաց է:

Համընդհանրացումն, անընդուն, չի կարող շրջանցել նաև Հայաստանը: Հայաստան պետք է որոշի իր քաղաքականությունն այդ հարցում, այն առումով, որ իր պատշաճ տեղը ունենա ընդհանրական կրթության համակարգում:

Հայ դպրոցն ու մանկավարժությունը պատմության ընթացքում գնահատել են հարևան մշակույթները: Մետրոպ Սաշտոցը հայոց գրեթե ստեղծելու համար անհրաժեշտ հասնեց գնալ երկրից երկիր, ծանոթանալ այլ քաղաքակրթությունների հետ, գնահատել նրանց ստեղծած արժեքներն ու նոր միայն, դրանք իմացության հիման վրա, ստեղծել իր ազգային գրեթե, Գրիգոր Մազաիրոսն իր համալսարանի համար ընտրել ու թարգմանել է ժամանակի ամենամարտնչաբար գիտական կրթողները և դրանք օգտագործել որպես դասագիրք իր հիմնածեմարանում:

Մեր ժամանակի պահանջը ոչ թե ազգային նկարագիր կրողները և այն օտարով փոխարինելն է, այլ համաշխարհային, համամարդկային արժեքների համակարգի որպես անմիջական մասնակից ընդգրկվելը, որը ոչ միայն ընկալում է այդ արժեքները, այլ նաև հարստացնում դրանք, համագործակցելով գիտական կենտրոնների և կրթական հաստատությունների հետ, իր ուրյան տեղը ունենալով դրանց շարքում: Այս առումով, անհրաժեշտ է փոփոխություններ կատարել մանկավարժության հիմ-

ԽՈՒՆԵՐԻ ԴՊՐՈՑ. ԴՆՆԵՐԸ ԿՐԿԻՆ ՓԱԿՎԵԼ ԵՆ

կենտրոնի ղեկավարը այդ երեխաներին բացառապես նպատակով դիմել է Լոռու մարզպետարանի երեխաների իրավունքների բաժնի, սակայն պատասխան դեռ չի ստացել:

Նույն բաժնից տեղեկացանք, որ լսողական սարքի կարիք ունեն 29 երեխաներ: Այս տվյալները բաժնին է հաղորդել Լոռու մարզպետարանի առողջապահության վարչությունը: Ըստ նույն աղբյուրի, այժմ լսողական սարք տրամադրում են բժշկական համեմատողովները: Երեխաների իրավունքների բաժնի շարունակում է հետազոտությունը՝ պարզելու, թե քանի երեխա խուլների դպրոց համաձայն կարիք ունի: Այս տարի 2 երեխայի ուղեգիր է արվել երևանում սովորելու համար:

Այնուամենայնիվ, երեխաների կրթության հարցը առաջնային խնդիր է մնում բոլոր ընտանիքների համար: Շատ ընտանիքներ չեն կարողանում երեխաներին տրանս ուղարկել ոչ միայն ֆինանսի, այլև նրանք անհարմարությունների պատճառով:

Ասենք 15 տարեկան կամ ավելի մեծ պատանիները չեն կարող դասի նստել առաջին դասարանցիների հետ, իսկ բարձր դասարանցիների հետ նրանք ուղղակի չեն հասցնում ծրագիրը, ուստի անչափ կարեւոր է տեղում դպրոց ունենալը, - ասում է Գագիկ Սերոբյանը:

Չնայած դրամաշնորհի բացակայությանը, ծեստերի լեզվի ուսուցչուհին կամավոր իրենցընթացով աշխատել է մինչև 2006 թ-ի նոյեմբերը, լավ հասկանալով, որ ծեստերի լեզվով խոսելու համար անհրաժեշտ էր ընդհանրող փոխհաղորդակցությունը: Սա կրկնակի բարդ խնդիր էր, որովհետև յուրաքանչյուր ընտանիք մշակել էր ծեստերի իր լեզուն: «Արդեն կամավոր աշխատել անհնար է, մեք էլ ենք ընտանիք պահում, չենք կարող հասարակական հիմունքներով հանրօգուտ աշխատանքով զբաղվել», - նշում է Անահիտ Դավալյանը: Ուսուցչուհու աշխատավարձի համար կրթաշնչակրթային միության նախագահը դիմել է Լոռու մարզպետարանին և Վանաձորի քաղաքապետարանին, սակայն պատասխանել են, որ իրենք էլ ֆինանսական խնդիրներ ունեն և չեն կարող ընդառաջել:

Մանկուհիների ընկալման մեջ: «Անհատները իրենց հետ բեղում են անցյալի փորձն ու ավանդույթները, ինչպես նաև իրենց մշակույթի պատմությունը, իսկ աշխարհն ընդգրկվում է դրանց յուրացման գործընթացի մեջ: Այս բոլորն իրենց ազդեցություն են թողնում նոր գաղափարներն ու իրարադրությունները մեկնաբանելու և դրանց հետ փոխհարաբերություններ ձևավորելու մեր կարողության վրա»:

Սովորողների համար բացահայտվող այնպիսի անհատներ, վայրեր ու հարցեր, որոնք դուրս են համայնքի և պետության սահմաններից, համընդհանրող կրթությունն ընդգծում է մարդկային հասարակության անկախ և միաժամանակ փոխկապակցվածության մեջ լինելու երկակի բնույթը: Այն հնարավորություն է տալիս սովորողներին ճիշտ հասկանալ առկա հակասությունները, վիճելի հարցերը, ինչպես նաև օգնում է սովորել իրավացի, իրատեսական որոշումներ ընդունել: Մյուս շնորհիվ ձևավորվում է անձ, որը տիրապետում է որոշակի հմտությունների և կարողությունների: Համընդհանրող կրթությունը ենթադրում է կենսադիտման ան, որն օգնում է անձին՝ ճանաչել սեփական արժեքները, գիտակցել այն սեփականիցները, որ հասարակությունն ունի իրենցից՝ որպես այդ հասարակության անդամների:

Այսպիսով՝ արդյունավետ համընդհանրող կրթությունը միավորված է ժամանակի և տարածության մեջ և անցյալը կպարտ է ապագային, այլոց կենսափորձը տեղայնացնում է, ճանապարհ հարթելով սովորողների համար:

1 ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Մասնագիտական կրթություն և մասնագիտական զարգացում, Երևան, 2005թ. էջ 29:

2 Նույն տեղում, էջ 30:

երեխաները չմտնեն և ազատ ու անկաշխարհ հաղորդակցվեն, նաև՝ գրեթե անզուգուծությանը ու գորգագործությանը զբաղվեն:

-Տաք մնալով նրանք մեկնաբանում են հասարակությունից, հետո վերափոխվում գրեթե ավելի թժվար է դառնում: 5 տարվա ընթացքում ահագին հաջողությունների ենք հասել, երեխաներն իրար հետ չվիճել ու ընկերավարություն են սովորել, հիմա թեև ուցուցուհու հետ պարբերաբար տնայնք ենք կազմակերպում, բայց դա բավարար չէ: մտահոգում է Գագիկ Սերոբյանը:

Կենտրոնում գրեթե ավակա չի զբաղվում. անցած տարի դպրոցը նոր իրատեսական կրթության գրեթե է ստացել: Կենտրոնի ղեկավարը փաստում է, որ դասավանդման համար ծեստերի լեզվի ուսուցչուհին և ստորդրոգը՝ խուլ ու համաձայն մանկավարժ էր բավարար են: Նրանք պատրաստ են վերադառնալ աշխատանքի, սակայն դպրոցը վերստին բացելու և աշխատավարձերն պահպանելու համար աջակցություն է հարկավոր:

Գ.Գ. - Բազմաթիվ անհարմարություններ առիթ են հանդիսացել, որպեսզի կրթաշնչակրթային կենտրոնի տնօրենը նոր, հարմարավետ շենքի շինարարություն նախաձեռնե: Գագիկ Սերոբյանը ցանկանում է, որ դպրոցի անունը լինի համահունչ լինի գործունեությանը. մոտ ապագայում գա նախատեսում է մեծախառն թատրոն հիմնադրել, որպեսզի երեխաները պարտա ժամանակը ցցնելու, ինչպես նաև արվեստի հետ շփվելու հնարավորություն ունենան: Ապագա շենքի նախագծային աշխատանքներն արդեն ավարտվել են, բայց, ինչպես ասում տեղ, այստեղ էլ գուժարի տրությունը խոչընդոտում է աշխատանքներ սկսելուն: Շենքի շինարարությունը հնարավոր կդառնա 44 մլն 263 հազար դրամ ունենալու դեպքում, այնինչ՝ համապատասխան տարածքի հարցն էլ դեռևս լուծում չի ստացել: Վանաձորի քաղաքապետարանը օրենքի տարիք հետևելով հրաժարվել է տարածք տրամադրել, պատասխանելով, որ գուժար ունենալու դեպքում միայն կարելի է դիմել տարածքի համար: Պահանջվող գուժարը ձեռք բերելու նպատակով Գագիկ Սերոբյանը հայտարարություններ հանգեց է եկել լրսովածիջողներով և Վանաձորի Արշիվի ընտանիքի մասնաճյուղում հաշվեհամար է բացել...

Հանրակրթության պետական կրթակարգով ամրագրված ճանաչակալից նորությունները

Թերթի սույն համարից սկսած պարբերաբար հատվածներ կներկայացնենք Մ. Սկրտչյանի «Հանրակրթության կազմակերպման հիմնահարցերը» աշխատությունից



Մանուկ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի (ԿԱԻ) Մանկավարժական գիտահետազոտական բաժնի պետ

12-ամյա կրթություն

Միջնակարգ ընդհանուր կրթությունը իրականացվում է 12-ամյա ընդհանուր տեղի կրթությամբ (ընդգրկում է 6-18 տարեկան երեխաներին) եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ հետեվյալ հաջորդական աստիճաններով.

- ա) տարրական դպրոց՝ 4 տարի (1-4-րդ դասարաններ),
- բ) միջին դպրոց՝ 5 տարի (5-9-րդ դասարաններ),
- գ) ավագ դպրոց՝ 3 տարի (10-12-րդ դասարաններ):

Հանրակրթության բովանդակությունը

Հանրակրթության բովանդակությունը ներկայացվում է առանձին ուսումնական բնագավառներով և բովանդակային բաղադրիչներով:

Կրթակարգի նախագծով սահմանված են հետևյալ բովանդակային բաղադրիչները.

1. գիտելիքների համակարգ,
2. ճանաչողության-մտածողության մեթոդներ,
3. կարողություններ և հմտություններ՝
 - 3.1. հաղորդակցական,
 - 3.2. համագործակցային,
 - 3.3. ինքնակազմակերպման,
 - 3.4. ստեղծագործական,
 - 3.5. արժեքային համակարգ:
- Կրթակարգի նախագծով սահմանված են հետևյալ ուսումնական բնագավառները.

1. հայոց լեզու և գրականություն,
2. օտար լեզուներ,
3. մաթեմատիկա,
4. ինֆորմատիկա և ՏՀՏ,
5. բնություն,
6. անձ և հասարակություն,
7. արվեստ,
8. տեխնոլոգիա,
9. ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:

Շրջանավարտի կատարելատիպը

Կրթության նպատակների իրականացումը

ման արդյունքում ակնկալվում է, որ դպրոցի շրջանավարտը պետք է՝

ա) լինի մարդասեր, ազնիվ, հայրենասեր և պատասխանատվության զգացումով օժտված անհատ,

բ) ճանաչի իր հայրենիքը, տիրապետի մայրենի լեզվին, ընդունի այն արժեքները, որոնք սեփական ժողովրդի գոյատևման և առաջընթացի նախապայմանն են,

գ) ունենա պետական չափորոշիչով սահմանված գիտելիքների համակարգ և ձեռք բերած գիտելիքները կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն,

դ) ունենա ինքնուրույն մտածելակերպ, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու ունակություններ, ի գործ լինի ընկալելու, վերլուծելու և կիրառելու հասարակական և տեխնոլոգիական նոր գաղափարներն ու նորամտածությունները,

ե) ի վիճակի լինի դրևորելու փոխադարձ ըմբռնում և համագործակցություն ապահովող հարաբերություններ ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենց մեծերի ու փոքրերի հետ,

զ) լինի պետության, հասարակության, բնության և շրջակա միջավայրի լիիրավ մասնիկն ու պաշտպանը,

է) իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, լինի օրինապահ, նախաձեռնող և հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող, ընտրություն կատարելու և իր ծայրի իրավունքը կիրառելու ունակ քաղաքացի,

ը) կարողանա վերլուծել հասարակական երևույթները, կողմնորոշվել հասարակական իրադարձություններում և ունենա հասարակական իրադրությունների վրա ազդելու գիտելիքներ ու կարողություններ,

թ) իմանա հայ ժողովրդի և համաշխարհային պատմությունն ու ճանաչի մշակութային արժեքները, իրազեկ լինի իր երկրի իրավական, տնտեսական և քաղաքական հիմքերին, գիտության և արվեստի նվաճումներին,

ժ) գիտակցի հայ ժողովրդի ու հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ,

Ճա) մտահովվի ազգային խնդիրների լուծման և պատրաստակամություն դրսևորի հայրենիքին ծառայելու գործում, լինի ազգային ավանդույթների, համամարդկային արժեքների պահպանողն ու փոխանցողը,

Ծբ) ունենա այլ լեզուներով հաղորդակցվելու, ժամանակակից հաղորդակցման տեխնոլոգիաներից օգտվելու կարողություններ,

Ծգ) լինի հոգեպես և ֆիզիկապես առողջ, իմանա առողջ ապրելակերպի, անվտանգ կենսագործունեության կանոնները և դրանք կիրառի կյանքում,

Ծդ) գիտակցի ընտանիք կազմելու անհրաժեշտությունը, պատրաստ լինի ընտանեկան կյանքին, ինքնուրույն տնտեսավարմանը, ամուսնու և ծնողի դերին, տիրապետի տարրական մանկավարժական

կարողությունների, ժե) կարողանա ճիշտ գնահատել սեփական հնարավորություններն ու վարքը, համակված լինի լավատեսությամբ և սեփական ուժերի հանդեպ վստահությամբ, ցուցաբերի ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու ձգտում և կարողություններ,

Կրթակարգի կատարելագործման հեռանկարները

Կրթակարգը իր կառուցվածքով ճկուն է, մարդու և հասարակության կենսական պահանջներին ու պետության պատվերին համապատասխան փոփոխելի ու զարգացող:

Կրթակարգի վերահսկումն ու գնահատումն իրականացվում են նրա պահանջների կատարմանն աջակցելու, շարունակական զարգացումն ապահովելու, կիրառման ընթացքը գնահատելու և վերահսկելու նպատակով:

Հանրակրթական դպրոցներում և կրթության կառավարման մարմիններում իրականացվում են ներքին և արտաքին վերահսկողություն և գնահատում: Վերահսկման և գնահատման արդյունքները հիմք են ծառայում կրթակարգի պահանջների վերանայման և կատարելագործման համար, որն իրականացվում է կրթակարգի մշակման և կատարելագործման համապատասխան հանրապետական կառույցի կողմից:

Կրթակարգի ներդրումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված 12-ամյա միջնակարգ կրթության անցումն ապահովող միջոցառումների ցանկի և ժամանակացույցի համաձայն:

Շուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկությամբ հանրակրթության պետական կրթակարգում կատարում է անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ:

Կրթակարգում տեղ գտած թերությունները և չհարթահարված պրոբլեմները

1. Ավելի հստակ պատկերացնելու համար, թե կրթակարգով նախատեսված հիմնարկություններն ինչով են պայմանավորված և կրթության ոլորտի ինչպիսի նոր ողակ են ներառվում, արժեք, որ կրթակարգում ավելի հստակ ներկայացվեր կրթության ոլորտի ներկա վիճակը: Կրթակարգում առանձնացված էր միայն հետեվյալը.

Միջնակարգ հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպում և կրթության բովանդակությունը պետք է բարելավվեն՝ հաշվի առնելով մի շարք հիմնահնդիքների առկայությունը: Մասնավորապես՝

* սովորողների ուսումնական բեռնվածությունը չափազանց մեծ է, իսկ կրթության բովանդակային պահանջները բարդ են և ուղղված են բարձր առաջադիմություն ունեցողներին,

* չափից ավելի է կարևորվում սովորողների կողմից տեղեկատվության պասիվ ստացումն ու փաստերի մտապահումը, բավարար չափով ուշադրություն չի դարձվում նրանց ճանաչողական-ինացական հմտությունների զարգացմանը,

* միևնույն դասարանի և տարբեր դասարանների կտրվածով անբավարար և իրականացվում բովանդակության փոխհամապատասխանեցումը,

* ուսումնական ծրագրերը հիմնականում իրահանգչական բնույթ են կրում,

* առարկայական ծրագրերը բացարձակացնում են ուսուցչի և դասագրքի դերը՝ թերազնախառնելով ուսուցման ժամանակակից մեթոդները և այլընտրանքային աղբյուրները,

* գործող չափորոշիչները չեն համապատասխանում XXI դարի պահանջներին:

2. Կրթակարգով սահմանված են հանրակրթության բովանդակային բաղադրիչները: Սակայն, ինչպես երևում է տարբեր իրապարակումներից ու քննարկումներից, հստակ չի ընկալվում, թե ինչ է նշանակում «կրթության բովանդակության բաղադրիչ» արտահայտությունը: Եթե մի կրթակարգում էլ չկա հարցի բացատրությունը, այս կարևորագույն նորույթը մնում է ընթերցողների և մասնագետների կողմից չնկատված և չկարևորված:

3. Կրթակարգով ամրագրվում է դասադասարանային համակարգը՝ իր հիմնական ստրիկտությունով:

4. Կրթակարգում բացակայում են մանկավարժական նորարարության և նորամտածությունների կազմակերպման կարգն ու չափորոշիչները:

5. Մանկավարժական նորարարությունն ընդհանրապես չի կարևորվում:

6. Կրթակարգով հաստատագրված չէ մանկավարժական հասկացությունների համակարգը, իսկ փաստաթղթին բերող է տերմինաբանական հանգանակները:

7. Կրթակարգը լի է անհարկի կրկնություններով և ավելորդ պարբերություններով (մնան թերությունները վերացնելով՝ հնարավոր էր փաստաթղթի ծավալը կիսով չափ կրճատել):

Ներկայացվող նյութի նպատակն է հանձնել, որ կրթության ոլորտի բոլոր երկանք թերություններն ու պրոբլեմները հետևած են այն հանգամանքի, որ դասադասարանային համակարգը իրեն լիով պատել է, և որ պրոբլեմների լուծումը հնարավոր է միայն նրանից արձատարապես տարբերվող այլ համակարգի կառուցումով:

Հաջորդ համարում կիրառարակվեն այդ նոր համակարգի հայեցակարգային պատկերացումները:

ՍԱ ՄԵՐ ԹՈՌՈՐ ՀԷ, ՍՐԱՆԵՔ ԷԼ՝ ՄԵՐ ՊԱՊ ՈՒ ՏԱՏԸ ՉԵՆ

Գովազդախեղդ կամ փն ով ազ դ



Ավանա խորհում ենք, եթե դա դեռ սկիզբն է, ապա՝ Աստված մի արագսե, որ այս «պաշտամունքի» վերջն էլ տեսնենք...

Չցանկանալով խճճվել տարբեր տրամաչափի՝ անտակտ-անբովանդակ և առավել լկտի, այլ գովազդների ցանկում, Նշեք և մեկը, քանզի բարոյակամության չափ ու սահման չճանաչող էրոտիկ ֆիլմերից ու տեսախոլովակներից բացի՝ կան գովազդներ, որոնք առաջին հայացքից կարծես թե ծաջող ու խիստ յուրապարտելի չեն, սակայն ինչքան խորհում, զմնում ու վեր ենք լուծում մաստուցված գովազդների իմաստն ու պատկերները, այնքան ավելի ու ավելի ենք համոզվում, որ դրանք ոչ միայն վնասում են մեր անպաշտպան սպառողի շահերը ֆիզիկապես ու նյութապես, այլև

մեր ողջ հանրությանը՝ բարոյապես...

Լրմենթելի հսկա գովազդային ցուցատախտակի վրա պատկերված է նույն դեռահաս աղջիկ մի ալեհեր ծերունու և մի տարեց կնոջ հետ **Իճճ մոտ 27 դրամ է, իսկ թե՛գ մոտ...** խորհուրդ:

Եթե այս ցուցատախտակի նպատակը շահույթի ակնկալիքն է, ապա, քաղաքական թիզմենի կանոններով, մենք իրավունք չունենք մտնել նրանց գրպանն ու դրամապանակել...

Սակայն նրանք փորձում են մտնել մեր ընտանիքները և շեղել մեր դեռահասներսմբերդույապես:

Իսկ որ մեր ալեհեր պապ ու տատը երբեք չէին հաղործի «դեռ հավ չդառած վառելիք» սանձաբանակ ու կապը կտրած, բաց մեջքով աղքկա, և նրա դուրս պրծած շորի փեշի հետ նկարվելու նույնիսկ



գաղափարը, դեռ ակներև պորտն էլ տեղը կորնեմի՝ ամենևին չեն նկատում... Դրա համար էլ իմ ու համախոհներիս անուճից և մեկ անգամ շեշտում են.

- Սա մեր թողը չէ, սրանք էլ՝ մեր պապ ու տատը չեն:

Գրաչ ՍԱՐՈՒԲՅԱՆ

ՄԵՐ ԳՐՈՂՑԱԸ ՄԵՐ ՀՊՈՒՐՏՈՒԹՅՈՒՆ Է

Քաջարանի թիվ 1 դպրոց. մի կառույց, որն արդեն կայացել է, բայց, որ ամենակարևորն է, ձգտում է դառնալ պվկի ինքնատիպ ու կատարյալ: Եվ առաջնահերթ գերիհնդրի ունի՝ ոչ միայն ակադեմիական գիտելիք տալ աշակերտին, այլև որոշակի հիմնադրամներ ու կարողություններ ձևավորել՝ նոր հասարակարգում կի հայտ եկած պահանջների թեկարարմով:

Դպրոցը հիմնովին վերանորոգված է և գտնվում է Ջանգելուրի պրնճանով իրերեսունյին կոնքրետի ու շաղկապից ու հողածուրքային մերթ: Արդյունաբերական սկսյալ տնօրեն Մաքսիմ Զակոբյանի մեծ ներդրումն է շնորհիվ է, որ վերանորոգվածը հետո գերժամանակակից համակարգիչներով համալրված՝ դպրոցի համակարգչային ուսուցանման կենտրոնը (ՊՅՈՒԿ) ծառայում է որպես առանձին աշխատանքների դասավանդման կենտրոն: Եվ ոչ միայն: Դպրոցի աշակերտները, ուսուցիչները, ինչպես նաև համայնքի ներկայացուցիչները օգտվում են կենտրոնի համազգային: Աշակերտների և ուսուցիչների ջանքերով հրատարակվող դպրոցական «Տիր» թերթը ծնունդ է առնում այստեղ:

Դպրոցական շենքի հիմնանորոգումից բարձր շունչ են առել նաև միջանցքներն ու դասասենյակները: Հանույց է մնալ դպրոցում, մնալ դասասենյակներում աշխատելը: Ուսուցանման և ուսումնառության գործընթացը այստեղ միմիայն արարում է աշակերտի և ուսուցչի տեղեկագործ աշխատանք, որ վերջինները է արձանագրում: Հանրապետական օլիմպիադաներում տարբեր առարկաներից մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտների ձեռքբերումները պարտավորեցնում են և աշակերտներին, և ուսուցիչներին...

Քաջարանի թիվ 1 դպրոց: Ֆիզկուլտուրայի շարժումն ուսուցիչներ, ակնուշուշ, կերպարներ այս դպրոցի մարզադահլիճի պես մարզադահլիճ ունենալ: Դարձյալ հովանավորների աջակցությամբ հիմնովին վերանորոգվել է այն, հագեցվել անհրաժեշտ մարզագույքով: «Ֆիզկուլտուրա» առարկայի ամենակարևորներից է կրթօջախում, որովհետև կան իրենց գործն իրավամբ կարևորող մանկավարժներ:

Դպրոցում դասավանդող ուսուցիչները պարբերաբար մասնակցում են ՎԱԻ-ի Կապանի մասնաճյուղում կազմակերպվող դասընթացներին, նոր ռազմավարություններ կիրառելու իրենց դասաժամերին:

Դպրոցի տնօրենի ինքնատիպ աշխատանքային ոճը ցերմ ու գործուն է դարձնում ուսումնական միջավայրը: Նժիշկային փոխադասություն կա, որ վերաբերում է կատարյալ առաջընդդիր: Վերջինս պետք է առաջալի սիրտ ունենա, իմաստասերի զուլի, պարամունք ճակատ: Բարձրագույն չէ այս որակյունը ի դեմս Լևոն Մարգարյանի: Գործել՝ նրա համար նշանակում է փարսել տեղ իր ջրապատի թմրությունը, տկարությունը, նշանակում է ոչինչ չգողել անթերև ու խտանա, ծուլ վիճակի մեջ:

Բազմաթիվ ու բազմապես միջոցառումներ, սեմինարներ, բաց դասեր, վերապատրաստումներ, մեթոդամանկավարժական հարցերի «Քննարկումներ»: Սա դպրոցի առօրյա է:

Այստեղ կարգախոսն ու հավատանքն այն է, որ ուսուցիչներն ի գործ են բարելավել դասավանդումը և պետք է բարելավվեն: Աստեղծված միջավայրն է ծնունդ տալիս այսպիսի գործունեությանը:

Կրթության ոլորտի բարեփոխումները աստիճանաբար դառնում են փոխորդ ուսուցիչների աշխատանքային առօրյայի հաջակների մասը և ամրագրվում:

Քաջարան քաղաքն ապրում է, արարում, և նույն արժանավելությունքան արարում ու արարում է քաղաքի կենսունակության առանցքը՝ դպրոցը, բայելով մեր օրերին համընթաց, միաժամանակ հավատարմի մնալով հայոց ավանդակական դրաբության հոգևոր արժեքներին:

Ամսաթիվ ԳԵՂՈՂԱԿՆ
Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Նրա, այսինքն՝ Գրիգոր Տաթևացու, քարոզը տեսիլքների և երազների մասին

Ղվսեի խոսքերով, որ ասում է: « Ես տեսիլքներում կայացել եմ, և երազների միջոցով կխոսեմ ձեզ հետ »

Աստված բնութային բարի է, և իր բարեարդությանը իմանում է արարածներին. և կանոնում է, որ բոլոր մարդիկ զան դեպի ճշմարիտ գիտությանը: Որի համար իբրև ճրագ մեզ տվեց օրենքներն ու պատվիրանները, որպեսզի դրանք լույսով ընթանան դեպի Աստծո ճշմարիտ գիտությունը: Եվ եթե երբևէ սխալվեցեք արդարության ճամապահից, Աստված իր բարեարդ կամքով խրատում և արդարության ճանապարհի վրա է դնում: Եվ այս ձեռքի հիմն մասնների գործողությանը է իմանում:

Նախ, որ մեզ տվեց բանական միտք, որով կարողանում ենք բարին չարից տարբերել, հետևեց մեզ մտնող չարից և ընթանում ենք բարու հետևից, ինչպես մարդարեն է սառն: «Հետագի չարից և բարից գործիր, փնտրիր խաղաղությունը և գնա նրա հետևից», որով շատում են խորհում, տեսնում և խորհելով գուշակում են ապագան իրերի փորձից, և հետևում են չարից:

Եվ եթե սրամիջ մոլորվում ենք, այնժամ երկրորդը տեսիլքների և երազների միջոցով, իմանում է հետևել ապիսու չարից: Երրորդ մարմնի չարտունների միջոցով էլ, ցույց տալիս ապագան, ինչպես, երբ անդամներից մեկը շարժվում է, օրինակ աչքը, մեքեք կամ էլ այլ անդամներից մեկը, փորձից եմելով գուշակում ենք, թե ինչ է լինելու:

Չորրորդ կան կենդանիների միջոցով, ինչպես ազգավարներ, անգղերը կամ այլ կենդանիներ, որոնք ծառայում են մարդկանց և կոչ են անում զգուշանալ առաջիկա վտանգներից:

Հինգերորդ նշան է լինում երկնքի տարերներից և լուսատուներից, ինչպես նրանց խավարումը, գիսավոր աստիղ երևալը, ամպերի շարժումները, որոտումները և այլ բաներ, ինչպես Սուրբ Գրքում է սառն: «Էջանների և ժամանակի մեջ դրեց նրանք», որպեսզի նրանցով բոլոր տեղերը տեսնելով պատրաստվեցեք հանդերձայի համար: Եվ ինչի որ սովոր է յուրաքանչյուր ու, ցուցավորելով և նախապատրաստում է նրան: Չորրորդիակ եզրափակումները, որոնք երազահաններ և հմայրվածքներ են, (կառույցներ կամ իրերից) անգղերի միջոցով ուղղություններ: Ինչպես զված է Սուրբ Գրքում: «Փարավորը երազ տեսաւ, որ գետից ելուն էին յոր գեր և յոր միտար երհնցերը, նույնպես և յոր ասոցը հասկեր և յոր ազգաւոր հասկեր: Նիհար երհնցերը կլանում էին գերերին և վտիտ հասկերը պարարտ հասկերին»: Փարավորը կանչում է բոլոր եզրափակումների իմաստներին, նրանք չէին կարողանում մեկնել երազը: Եվ երբ եկավ Հովսեփը, մեկնեց և երազը: Ասում է յոր երհնցերը և յոր հասկերը այն են նշանակում, յոր յոր բեքնառատ տարիներ են լինելու, իսկ այդ յոր տարիներից հետո յոր սով տարիներ են լինելու, որ նշանակում էին յոր միտար և վտիտ երհնցերը:

Այդ, նախ հայտնի է, թե բանից են երազները եղանակները: Վարդապետներն ասում են, թե չորս տեսակի են երազները.

Առաջինը բնական էրևողով դիտարկված, երրորդը փոփոխված, երրորդը դիվական է:

Չորրորդ ուսուցանող տեսիլքներն են առաջանում, քանզի եր մարդը ճնջում է՝ զգայական խախտվում է և իմաստային անգործ է մնում, այն ժամանակ տնկականն է առաջ գալիս և (վերականգնվում) հիշողությունը մեք կամ անցած գործերն է հիշում, կամ այն, որ պետք է գործվեն, որոնք սովորի մեջ են երևում նրանք: Սա բնական է:

Իսկ փոփոխական այն է, որ տարբերներից է լինում արտաքին և ներքին կերակուրներից, կամ էլ հիվանդություններից: Եթե հուրն է ամբողջական մոլորում է տեսնում, եթե ջուրը, եթե օդը և եթե հողը, ապա անընթացում է երևակայում:

Իսկ դիվական այն է, որ դեմքն իրենց սրածնությանը մարդկանց ցույց են տալիս ապագան չար կամ բարի և այդպես խարսում են մարդկանց: Իսկ չորրորդը, որ է տեսիլք և Աստվածային հայտնություն: Կանոնում է մեզ չարից հեռացնել դեպի բարին, որն էլ մարդ տեսնում է տեսիլքի միջոցով, ինչպես ասում են, «Ես տեսիլքներում կհամայնեմ և երազներում կխոսեմ ձեզ հետ»:

Մեկ այլ խնդիր է կա, թե ինչն է են անարժանները աստվածային տեսիլքներ տեսնում, ինչպես փարավորը, Լաբուզորոտորը և շատ ուրիշներ: Անենք, որ անարժանները արժանավորների համար տեսիլք տեսան, ինչպես փարավորը արժանավոր Հովսեփի համար, որպեսզի Սա հայտնի լինի և մեծարվի: Նույնպես է Լաբուզորոտորին՝ Դանիելի համար, որի երազ մեկնելով հայտնի եղավ, որ «Աստու Հոգի կա նրա մեջ»: Նույնպես և Բաղաձամ մոզը տեսավ իրեշտակին և էջը, որ խոսեց Իսրայելի մասին, օրինակ և չէր համարձակվում անթերև Աստծո ժողովրդից: Այսպես էլ Կայիափան մարգարեացավ Քրիստոսի մասին, որ մարգարից ցեղի Փրկիչն էր, սասելով: «Լավ է նրան

մեղքներ, քան թե անբողջ ազգ կորչի»:

Երրորդ խնդիրն էլ այն է, թե օգուտն ինչ է՝ երազով կամ մարգարեությանը նախագետ լինել և ապագան գուշակել: Ասում ենք, որ այստեղ երեք զվախող օգտակար բաներ կան: Նախ, երբ բարին է գուշակում, դառնում ենք առաջիկա բարուն, որպեսզի չզրկվեցեք նրանից: Երկրորդ, երբ չարն է գուշակում, զգուշանում ենք, որպեսզի չընկնենք չարի մեջ: Եվ երրորդ եթե ներկայում չարի մեջ ենք գտնվում, դառնանք և ապաշխարենք մեր մեղքերը: Որի համար էլ մարգարեության և երազների միջոցով գուշակում են ապագան: Իսկ փարավորի երազը, որ մեկնեց Հովսեփը ասում է. «Յոր տարի լիություն և յոր տարի սով է լինելու: Աստված քեզ ցույց տվեց այդ երազը, որպեսզի լիություն յոր տարիները ընթացնում հավաքես ցորեն, որ երկիրը չմեղին: Եվ փարավորը Հովսեփին անբողջ երկրի վրա իշխան կարգեց, իր մատանին տվեց նրա ձեռքը, քնեցյալ պատմուճան տվեց նրան, իսկ պարանոցից էլ ոսկի մանյակ գցեց ու կաշեքի վրա բարձրացրեց: Եվ նա (Հովսեփը) երկրի հինգերորդ մասը գտնեց հավաքեց այժման, որ ամբարներին թիվ չկար:

Այդ մատանին ցույց է տալիս անմահ թագավորի պատկերը, որ անարատ էր նրա մեջ: Բեռեզ հողու ամեներթայան պատմուճանն էր, մայրակը ամբողջ և անապական հավաքողը: Իսկ կառքը ինչպես եղինա, որ հրեղեն կաշեքով պարուն էր սա Աստված: Սա նշանակում է, թե ովքեր Հովսեփի մեծան լինեն սուրբ և անարատ մեղքերից, նրանք (նույնպես) երկնքում քաջավորի սիրելիները կլինեն, երկրի վրա իշխան և հրամայող, և նրանք կազանվեն Աստծո վերստին պատուհասից և շատերի համար փոխորթան պատճառ կդառնան: Այդ յորք թիվը սուրբ և ճշմարիտ Աստծո տոնը, քանզի Աստծո սրբեք յորեքորդ օրը և յորեքորդ օրը Աստծո տոնն է, ինչպես շաբաթվա մեջ կիրակին: Նաև, Աստու Հոգու գործողությունները յորք են, որով Աստված իմանում է և բարին գործում մարդկանց մեջ: Իսկ եթե մարդիկ արժանի չլինեն Աստծո բարությանը, այնժամ նույն թվով յորքայն գործություն պատուհասում է նրանք, որի համար ասում է, թե յոր լիություն և յոր սով տարիներ են լինելու: Դա սովորությունն է, երբ Աստված պատժում է մեղքերի համար, նախ երկար ժամանակ խաղաղության միջոց է տալիս, ինչպես Նոյի օրերում՝ հարյուր տարի, և ապա պատուհասում է, ինչպես ջրհեղեղը, և ինչպես եզրափակում է յոր յոր տարիներ լիություն եղավ և ապա յոր տարիներ՝ սով: Կամ որպեսզի այդ երկար ժամանակամիջոցին զղջան և նրան համար մեղքերից, որպեսզի համկարծակի զայլով պատուհասի չլրջեն, կամ էլ գիտակցեն, որ խաղաղությունից հետո խռովություն է լինելու, իսկ լիությունից հետո՝ սով, որպեսզի իրենց իրենց պատրաստեն, որպեսզի չլրջեն:

Ի՞նչ է սովը. սովը բազմաբանական է:

Նախ սովը կերակուրի պակասություն է, երբ մեղքի պատճառով երկրներ լինում է պղծմե, իսկ երկիրը երկաթը, ինչպես մարգարեի բերանով ասում է Աստված՝ «որ երկիրը անթերև ցորի և երկիրը պտուղ չտա», նույնպես դալարները չորանան, ամբողջ հողմերը և արմատները, որոնք հացի տեղ են լցնում, կչորանան, ձկները կմկազեն և անասունները կմեռեն, որպեսզի չլրջեն, ինչպես ասում է: «Բանանում մեծ մեղքություն էր»: Եվ սա լինում է այն պատճառով, որ կերակուրի և ըմպելիքի առատությունը մեղքերի պատճառ են լինում, ինչպես ասում է՝ «Այս և անօրենությունը ըն ջուրերի, Սոդոմ, երկրաբուրի հիդրությունը և զիճու լիությունը», որով այնպիսի գործեր էին գործում, որի համար Աստված կտրում է մեղքի պատճառը և սով տվեց: Դարձյալ մտքի սով է, երբ մարդկանց մեղքից վերանում է Աստծո իմաստությունը, ինչպես ասում է մարգարե. «Չեղ կատ ոչ թե հացի կամ ջրի սով, այլ Աստծո խոսքը լսելու»: Ինչպես որ կերակուրով է պարուն մարմինը, այնպես էլ Աստծո խոսքը կենդանություն է տալիս հոգուն, ըստ այն՝ «Ոչ միայն հացով կայսի մարդ, այլև Աստծո ամեն մի խոսքով»: Այս սովը այն ժամանակ է պատճառում Աստված, երբ մարդիկ անարժան են լինում Աստծո խոսքը լսելու, ինչպես ասում է՝ «Հրաման կտամ իմ ամպերին, որպեսզի անձրև չտեղան իմ այգում»:

Անապ մարգարեն է, վարդապետը, խրատողը: Երբ մարդիկ մեղքի մեջ են գտնվում և պատուհասի արժանի, արժեքավոր լինեն իմաստություններից, «որպեսզի ականջներով չլսեն, ասում է, արտուր հակաճանա, դառնան (առ Աստված)» և զղջան, այնժամ նրանք կընկնեն: Դարձյալ սով է գործողը, երբ մարդկանցից մկազում է գործն ու սրբությունը, այն ժամանակ մեղքն ու անօրենությունն են պատու մեզ և կլինենք սովյալ ու բարի գործերի կարտու:

Ինչպես առական է խրատում անառական ասելով: «Աստիկ սով տվեց այն անշարուն և ջրավորություն բարի գործերի, և մի մարդ վեր կացավ ու արածում էր մեղքի ցանկությունը խաղեղի

հետ և չէր հագնում նրանց կերակուրից»: Քանզի այս սովի համար է արդարև Դավիթ մարգարեն. «Փրկիլ ինձ, որովհետև նվազեց սրբությունը, և պակասեցին ճշմարտությունները մարդկանց ուղիներին», երբ նվազում է ճշմարտությունն ու սրբությունը, որը խոսքերի և գործերի (նվազում է), այնժամ ստույգաբար և արտերի գործերով կրջում է մարդը: Սակայն մարդը երկակի վտանգ ունի, մեկը, որ աստանայի որդի է դառնում, քանզի աստուհ լսում աստանան, իսկ մյուսը՝ ինչ որ խոսում է, չեն հավատում:

Ինչպես առական է ասում, թե ինչ է ստախտի սովը, երբ նրա ճիշտ (խոսքերը) չեն հավատում: Նույնպես և նրա հավատակը, որ Աստծո մտան է ճշմարտախոսը, առաջին, որ Աստված ճշմարիտ է և ճշմարտախոսը Աստծո մտան է լինում, և երկրորդ, երբ կարծեց հավատում են ճշմարտախոսի խոսքերին, նրա բոլոր ասածներն ու խոսածները ընդունելի են լինում, որի համար Տեղը հրամայում է: «Չէր այոն լինի այր և ոչը ոչ, քանզի դրանք ավելին չարից է»:

Դարձյալ հավատակ սով է, երբ մարդիկ ճշմարիտ հավատակից հեռանում են և դառնում կամ ուրախություն կան ինքնավարություն կամ և յոր յոր յոր հայտնությունը: Նաև, ով որ ըստ իր հավատակությունն է շարժվում և իր ընտրությանը հետևում է մորթությունը առաջնորդի, որը իր կամքի համաձայն է նրանց քարոզում (իրեն) հետևելու (համար), ինչպես առաջալսում է ասում: «Շտա իրենց արտի ցանկությունն ուրիշների ականջին հանելի վարդապետությունն են հորինում այսոց հանելի լինելու համար և խնձրվում են առաջակների մեջ»: Իրենց երեսները ճշմարիտ վարդապետություններից դեպի դուրս են դարձնում, որպեսզի իմաստունների խրատները անգործեն և անարգեն, սակայն սուտ առաջակներից են հետևում, «ովքեր ստույգաբանությունն և օրհնությանը են խաբում մարդկանը», ասում է առաջալսել, իսկ Տեղը գուշակում է՝ «Չէր մտ կան ոչխարների հանդերձներով», քանզի կրկանի հանդերձ ունեն է գառան է՝ գայլի՝ վերկի և մեքեքից հագնված:

Հեռուվորող երեք տեսակի զգեստ ունի, և այդ զգեստներով խարոզ (պատտում) է մարդկանց, ինչպես պատատում է արքայազան զայլը:

Նախ քահանայական զգեստով, որ հազել է իբրև կարգավոր հոգևորական:

Երկրորդ քարոզչությանը, որ միշտ ուսուցանում է:

Երրորդ քանզի հայտնապես սովորեցնում է օրենքի և սակարի (մասին), իսկ ծանուկ անօրենություն և թուլություն է խառնում, որը պարզապես մտերմություն կարողանում առաքելի և մորթվում են: «Նրանց պտից կնանայեք, ասում է Տեղը, և նրանց գործերից ճանաչեցեք և շխարթեք նրանց խոսքերից», քանզի նրանց համար է ասում Տեղը. «Նրանք ծանր բեռներ են բարդում ուրիշների ուսերին, իսկ իրենք մատուլ անգամ չեն դիպում, իսկ որքան չիտենեք նրանց, քանզի ասում են և չեն անում»:

Երբ մարդիկ թուլանում են հավատից մեջ, աշխարհի վարձանից նշան է, ինչպես Տեղը է ասում՝ Սարդու Որդի գալով երկրի վրա արդո՞ք հավատ կտան: Նաև կնվազի սերը, ինչպես Տեղը է ասում՝ «Ամօրենության շատանալով շատերի սերը կնվազի», ինչպես այժմ ենք տեսնում՝ բոլոր մարդիկ թերացել են հավատից մեջ և հեռացել Աստծու հույսից և ցամաքել են Աստծու և ընկերոջ սիրուցից: Այսպիսի բաներին հավատելի, հույսի և սիրտ սով են կոչում:

Դարձյալ պետք է գիտենալ, որ մահվանից հետո և հանդերձյալ կանոնում իմանալի սով է լինելու: Քանզի ինչպես այս կյանքն է լիություն և բոլոր իրերի հայտնագործությունը, այն կյանքը սով և դատարկություն է բոլոր գործերի, որովհետև չեն կատարում ոչ սերունդներ, ոչ հնձել և ոչ էլ հավաքել, ինչպես սովի ժամանակ:

Ինչպես որ սովի ժամանակ է լիությունը կորչում և չի երևում, այնպես էլ այն՝ այս կյանքի ասածնա, քանզի մահվանից հետո ոչինչ չի երևում, ոչ գուր, ոչ չի շինություն, ոչ՝ փառք, ոչ էլ գեղեկություն և ոչ էլ որևէ բան, որ այս կյանքում է, քանզի ամեն ինչ հավաքվում է:



Գրքարարից փոխարդեց խորեն սարկավազ ՄԱՌՈՒԿՍՆ

ՀԱՄԱԲԱՐՁՈՒՄ

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, աշխարհի եկավ, քարոզեց և ապրեց մեզ նման, որպեսզի բարի օրինակ լինի մեզ համար և Իր կյանքով արդարություն, ճշմարտություն ու սեր սերմանի... Իր սիրո ամենամեծ վկայությունը չարչարանքներն ու խաչելությունը եղան, իսկ ամենակարող գործունեությունը Իր Հարության հաստատեց: Նա երևաց աշակերտներին, Իր մորը և յուզաբեր կանանց, ապացուցելով, որ մարմնով Հարություն առավ և ոչ կարծեցյալ կերպով: Ոչ միայն երևաց, այլև 40 օր շարունակ ապրեց Երանց հետ, կերավ ու խմեց, չնայած կարիքը չուներ, քարոզեց փրկություն ու երկնքի արքայության մասին:

Հիսուսը գոտեմարտն էր հավատացյալներին, շրջում Երանց մեջ և Իր ներկայությամբ երկինքը երկրին մոտեցնում, քանի որ Իրենով էր արքայությունը հասանելի դառնում հողեղեններին, և վերանում էր անցրաբեր երկնքի ու մեղքերով ծանրաբեռնված երկրի միջև: Իր Աստվածային փառքն առավել ճանաչեց Համբարձմանը: Օրը հիմնադրեց իր: Հիսուսը շրջում էր 11 աշակերտների հետ՝ Երանց համար Աստծո՝ Թագավորության անիմաստի գաղտնիքները բացահայտելով: Երբ Գալիլեա տառու ճանապարհով քայլեցին մինչև Չիբենյաց լեռ, Տերն ըստ: «Ի՞նչ է տորված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա... Գնացե՛ք, ուրեմն, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, Երանց մկրտե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Այս խոսքերով նա իշխանություն տվեց աշակերտներին՝ քարոզելու, մկրտելու և Իր «գառներին» հովվելու: Ապա բարձրացնելով ձեռքերը՝ օրհնեց Երանց ու Երանցից բաժանվելով՝ երկինք համբարձեց: Անպերճ ծածկեցին Տիրոջ մարդկանց աչքերին: Ե՛ք մինչ Երանց ապաշխար ճայուն էին Քրիստոսի երկինք գնալուն, ահա

Երանց երևացին սպիտակ զգեստների մեջ երկու մարդիկ և ասացին. «Ո՛վ գալիլեացիներ, ի՞նչու՞ կանգնած նայում եք երկնքին: Այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք նրա երկինք գնալը»:

Քրիստոսն իր խոսքի համաձայն երկինք համբարձվեց և ապա, ինն օր հրեշտակների ինը դասերում փառաբանվելուց հետո, տասներորդ օրը Սուտեց Հոր աջ կողմում ու վերստին բազմեց այն փառքի մեջ, որից խոնարհիվել էր՝ ի սեր մեղավոր մարդկությունը:

Կատարվեցին մարգարեների կողմից գրվածները, և աշխարհի վրա լույս ծագեց... Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա, կամ որ նույնն է՝ վերականգնի երկնային արքայություն մտնելու և Աստծո ժառանգորդը լինելու իրավունքը: Աստված հավիտենական է, և Նրա խոսքն էլ՝ անփոփոխ ու հավիտյանների համար ասված. «Երկինք ու երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերն անփոփոխ կանգնեն»: Ուրեմն՝ երջանիկ լինե՛ք՝ վստահելով Երանց, ով մեր անդամական բարեկամն է և ամենաահա օգնականը:

Հիսուսը երկինք համբարձվեց, սակայն չչքեց մեզ, այլ, ընդհակառակը, գորացրեց՝ օրհնեցով, վանեց մեզանից երկրուր և հավատեց, որ սիրում է Աստծո ստեղծածներին ու հոգ տանում Երանց մասին, ասելով՝ «Ահա ամեն օր ես ձեզ հետ եմ, մինչև աշխարհի վերջը»:

Տիրոջ մշտական ներկայության խիստ ընդ համակված՝ ամեն տարի այդ օրը ցնծում է ժողովուրդը՝ զարմանալով ավետիսը միախուսելով Քրիստոսի համբարձման պայծառաշուք տոնին: Քրիստոսը Չիբենյաց լեռան վրայից երկինք բարձրանալով՝ նոր կյանք տվեց աշխարհին, և այս նորն իրենց վրա առան մարդիկ՝ ծաղկեպսակներ



ՅՈՒՆԻԻՍԿՈ ՇՆՈՊՊ ՖՈՆ ԿԱՌՈՒՍՅԵԼԻ . Համբարձում

կրելով գլխերին և միմյանց ծաղկեփնջեր նվիրելով... Այդ օրը խաչը գարդարում են բազմերանգ ծաղիկներով, որը կոչվում է ծաղկաբուս և մկիրում են եկեղեցուն:

Իսկ ի՞նչու՞ հենց ծաղիկներ... Ծաղիկը դրախտի կարոտն է, և մենք, միմյանց ծաղիկներ նվիրելով, դրախտի պատառիկ ենք ընծայում իրար՝ կարծես փափագելով ընթրիչներ երեսական պարտեզի երանությունը...

Ամեն ժողովուրդը յուրովի է ընկալում այս տոնը, իսկ մեր ժողովուրդն անգամ երգ է հյուսել և այն կոչել «Ձան գյուլուն»:

հարսիկի» օգնությամբ վիճակ հանում ու յուրաքանչյուրի համար մի քառատող երգում է՝ առնակահանության սովորույթը գալիս է՝ առաքյալների կողմից վիճակ ձգելու միջոցով Հուսույի փոխարեն Մատթիայի ընտրվելու պատմությունից: Մարտին էլ ամենսն չեն այս տոնից: Նրանք համբարձման գաթա՝ «չորեք» են թխում: Մեր ժողովուրդը սիրով է տոնում Քրիստոսի Համբարձումը և ամենացարդ հավատում Տիրոջ խոստմանը. «Եթե ես գնամ, ձեզ համար տեղ կպատրաստեմ, որպեսզի կգան և ձեզ կվերցնեն ի՞նձ մոտ, որպեսզի ուր ես եմ, այնտեղ էլ դուք լինե՛ք»...

Նաիրա ՊԵՂԱՅԱՆ

«ՔՐԻՍՏՈՍՆ ԱՄԵՆԱԿԱՐՈՂՆ Է, ԱՄԵՆԱԶՈՐ»

(ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «Գարեգին Նժդեղ և Քրիստոնեությունը» գրքից)

Նժդեղն իր բնույթով կրոնական ոգեշնչումի և խանդավառության աննախնայելիություն է: Նրա մեզ հայտնի ստեղծագործություններն են Քրիստոսի և Իր վարդապետության վերաբերյալ բացասական որևէ արտահայտություն ց'արդ մեզ չի հանդիպել: Ու, թեև նրա մտածումները հստակ են, աներկբա, և իրարամերձ մեկնաբանությանց հիմք չեն տալիս, սակայն ամենակատարյալ վարդապետություններն անգամ անհատների ու խմբերի կողմից ընկալվում և մեկնաբանվում են յուրովի և հաճախ, ենթակաբարբա՝ համապատասխան մարդու իմացական կարողությունների, շահերի, դիրքորոշման ու աշխարհայացքի: Ըստ այդմ, ուսումնա-գիտական գործունեության արդյունքները տարբեր են լինում. երբեմն մարդ հասնում է իրականության ճշմարիտ ըմբռնման, երբեմն անկեղծաբար մոլորվում է և երբեմն, ցավոք, խեղճարարում իսկությունը: Բացառություն չէ Քրիստոսի անձի և Քրիստոնեության ըմբռնումը, որոնք սխալ են հասկացվել, մեկնաբանվել և խեղաթյուրվել դեռևս Քրիստոսի կենդանության օրոք: Հիշենք Աստվածորդու դատապարտվելն ու խաչվելը, հիշենք նույնպես քրիստոնեական հարանվանությունները, նաև աղանդներն ու աթեիսական մեթոդները:

Բացառություն չի կազմել նաև Նժդեղի ուսմունքը: Թեև Նժդեղի կրոնականության լուրջ և համակողմ ուսումնասիրությունը Հայաստանում նոր է սկիզբ առնում, սակայն, արդեն ի հայտ են եկել տարբերույթ ու մերժելի տեսակետներ, որոնք չեն բխում Նժդեղի բուն ստեղծագործություններից: Այսպես, Նժդեղի ստեղծագործությունների հրատարակման գործում ավանդ ունեցող Մ. Լալայանը ցեղակցի և տարոնական շարժումների վերաբերյալ իր գրքերի ու հոդվածների մեջ, ցավով, նախապաշար վերաբերմունք է ցուցաբերում Քրիստոնեության, Հայ եկեղեցու և հայոց հին կրոնի փոխադարձության խնդրին ճիշտ գործողությունը Նժդեղին ցեղակցաբերելու կողմնակից այն «հայեցակարգ»-ի, որով հեթանոսությունը հայտարարվում է իսկապես հայկական, իսկ Քրիստոնեությունը՝ «որսից» բերած: Ե՛ք այս միտքը փոխադրվել է հրատարակությունից հրատարակություն: Ու, թեև իր վերջին հրատարակված մեջ հեղինակը փորձ է արել սրբագրելու այդպիսի վերաբերմունքը՝



նշելով, որ Նժդեղն անցյալապաշտ է, հակաքրիստոնյա չէ և չի ձգտել հին կրոնը վերականգնելու, սակայն Մ. Լալայանը լիովին չի ձեռքբաղվել մոլոր տեսակետից և գրում է. «Նժդեղն հակաքրիստոնյա չէ, բայց նաև Քրիստոսի ուսմունքի մոլեռանդ պաշտպանը չէ. մեզ նույնիսկ համարում է «գոյի քրիստոնեական բարոյախոսության, որը շարունակում է մնալ որպես ներկի և չպար, որպես թող և դիմակ՝ ուժեղների հոգու համար»: Նա հարգում է Նազովրեցու անձը իբրև գաղափարի հերոս, իբրև Աստվածամարդ, սակայն համարում է նրան ցեղապաշտ, իսկ նրա խոսքը՝ վեճ, բայց թյուրըմբռնման, ավելի շուտ՝ ստառցի ընկալման դեպքում՝ վտանգավոր»: Երիցս տարև ավել է թույլ տալիս Մուշեղ Լալայանը այս

փոքրածավալ հատվածի մեջ. նախ՝ ոչ մի քրիստոնյա մոլեռանդ չէ, և Նժդեղն չէր կարող մոլեռանդ լինել Քրիստոսի վարդապետությունը գնահատելիս, ցեղակրոնությունը դավաճելիս, Սյունիքը պաշտպանելիս կամ իր հարցմասիրության որևէ դրսևորման մեջ: Երկրորդ, հարգելի հեղինակը հավելում է Նժդեղի միտքը իր մասծածով և այն վերագրում Նժդեղին, երբ գրում է. «...սակայն համարում է նրան (Նազովրեցուն՝ Ա.Պ.) ցեղապաշտ, իսկ նրա խոսքը՝ վեճ, բայց թյուրըմբռնման, ավելի շուտ՝ ստառցի ոճով՝ մանրեղեն՝ վտանգավոր: Ընդգծված միտքը Մ. Լալայանի հավելումն է, որովհետև Նժդեղն այդպիսի մտավախություն երբևիցե չի ունեցել, և Նազովրեցուն, այսինքն Հիսուս Քրիստոսին, ցեղապաշտ չի անվանել և նրա միտքը վտանգավոր չի համարել: Երրորդ, գրքի հեղինակը խախտել է բնագրից մեջբերում անելու կարգը և համատեքստի կարգով վիճակով մատուցել ըմբերցողից: Արդյունքում, «հանցագործ ու անտարբեր մարդկության» կարծիքը վերագրվել է Նժդեղին, որի համաձայն Նազովրեցին, մեղա Աստուծո, ցեղապաշտ է, իսկ նրա խոսքը՝ վտանգավոր: Մ. Լալայանի գրքի ըմբերցողն ի՞նչ իմանա, որ նշյալ մտքերը Նժդեղին չեն, այլ՝ մեկ ուրիշի, եթե չկարող նաև Նժդեղն «Մեր հեղափոխության արարիչ» էստեյի հետևյալ տողերը. «Աշխարհի ամենեն անիծապարտ բռնապետության արմատ ձեռքով կը խաչվեր հայ ժողովուրդը: Գողգոթայեն՝ Արևմտահայաստանեն կը բարձրանար աղաղակը հավաքավառ խաչեցյալի՝ օգնություն, փրկություն՝ ինձ: Իսկ մարդկությունը՝ հանցավոր ու անտարբեր կը պատասխաներ...»: Ահա «հանցավոր ու անտարբեր մարդկության» պատասխանը մեկ հատված. վերոնշյալ գրքի հեղինակը, կարծում են, թյուրիմացաբար և ոչ միտումնաբար, ներկայացնում է իր ըմբերցողին իբրև Նժդեղի համազմունք: Ավարտելով հանցավոր մարդկությանը՝ հայ ժողովուրդին ուղղված «խրատներ»-ի շարադրանքը՝ Նժդեղն երականացնում է. «Այս էր աշխարհը հայկական Գողգոթայի հանդեպ: Այսպես կը պատասխաներ մարդկությունը մահվան դատապարտված այս ժողովուրդին, որը չէր ուզում մեռնել, բայց չէր կարող և ասարել»: Ահա ամենը:

ՀՈԿՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ԲԱՑԿԵՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԱՐՈՒՄՑ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Հովհաննես Թումանյանի դստեր՝ Թամար Թումանյանի 100-ամյակի կապակցությամբ Ամենայն հայոց բանաստեղծի տուն-թանգարանում վերանշակումից հետո բացվեց Մեծ լռեցու հարուստ գրադարանը:

Թանգարանի տնօրեն Վերժինե Մովսիսյանի խոսքով, Թ. Թումանյանն իր գիտակցական կյանքի կեսը՝ շուրջ 23 տարի, եղել է թանգարանի տնօրենը, և այսօր ունեցած հարստության հավաքման ու պահպանման գործում նրա դերն անմոռանալի է: Գրադարանն ունի մոտ ութ հազար գիրք և աշխարհի մեծագույն գրադարաններից մեկն է՝ Տոլստոյի և Գյոթեի գրադարաններից հետո...ասաց նա: Գրադարանի բոլոր գրքերը ենթարկվել են մշակման. հայրենաճակատի այդ գործում ակտիվ մասնակցություն են ցուցաբերել թե՛ թանգարանի, թե՛ Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-մատենագրարանի վերականգնման բաժնի աշխատակիցները:

Գրադարանի ֆոնդային Թամար Արամյանի տեղեկացմամբ, գրքերն առաջին անգամ են ենթարկվել մշակման ու ակտիվացման, որը տևել է մոտ 5 տարի՝ սկսած 2001 թվականից, ընդհատվելով միայն թանգարանի վերա-



ԳՐԱԴԱՐԱՆՍ
Բազմած են շուրջըս նրանք ամեն օր- Բոլոր համճարեղ մեծերն աշխարհքի, Երզում են , պատմում ներդաշնակ ու խոր Միտքն ու գաղտնիքը մահի ու կյանքի: Ու էսպես՝ ինձ հետ, իմ տանն ամեն օր, Ոչ հաց են ուզում ինձանից, ոչ շոր:
1917. I. 20

նորոգման տարիներին: Շուրջ 12 մեծ պահարաններից բաղկացած գրադարանը դասավորված է ըստ թեմաների՝ հայագիտություն, կրթականություն, բանասիրություն, բնական գիտություններ, արվեստ, հայ և ռուս գեղարվեստական գրականություն, առանձին բաժնով ներկայացվում են նաև բառարանները, ինչպես արել էր նաև Հովհ. Թումանյանը: Գրքերը թիֆլիսից երեկված են բերվել տարբեր տարիներին, որոնք թանգարանին տրամադրել է Թումանյանի ընտանիքը: Գրադարանում ամենահին արժեքավոր գիրքը Ներսես Շնորհալու «Հիսուս որդին» է (1660թ., Վենետիկ): Գրքային հարուստ ֆոնդի ճնշող մասը՝ մոտ 70 տոկոսը, ռուսալեզու գրականությունն է. հայերեն գրքերը թվով 2400 են, ռուսալեզուն՝

5220, իսկ օտար այլ լեզուներով՝ մոտ 530 անուն գիրք: Գրադարանի ֆոնդային նաև նշեց, որ Թումանյանի դստեր նախածեղծությամբ են սկսել ցուցադրել բանաստեղծի գրքային ժառանգությունը: Ինչն այդ ցուցադրությունը փակ է եղել:

Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Հասմիկ Պողոսյանն իր գոհունակությունը հայտնեց թանգարանի աշխատակիցներին, որ կարճ ժամանակամիջոցում կարողացել են գրքային մեծ հարստությունը մշակել և կրկին ներկայացնել թանգարանի այցելուներին: Փոխնախարար Գագիկ Գյուրջյանը նաև նկատեց, որ թումանյանական այս հարստության մշակակությունը մեծ է ոչ միայն ցուցադրության, այլև գիտական ուսումնասի-

րությունների առումով: Գրադարանի մշակմանը մասնակցող՝ թանգարանի մի քանի ակտիվ աշխատակիցներ նախարարության կողմից պարգևատրվեցին պատվոգրերով ու շնորհակալագրերով:

«Վասպուրական» հայրենակցական միության պատվավոր նախագահ, թանգարանի խորհրդի անդամ, ակադեմիկոս Վարդգես Հարությունյանի խոսքով՝ գրադարանը հարուստ է բազմաթիվ հավելակցու գրքերով, որոնք չեն գտնվի շատ այլ մեծ գրադարաններում: Իսկ Թամար Թումանյանի մասին խոսելիս ասաց, որ ինքն այն երջանակ մարդկանցից է, ով բախտ է ունեցել ծանոթ լինելու նրա մեծ մեծախոհ մարդու հետ և վայելելու նրա մտերմությունը:

Թանգարանում նորովի բացվեց նաև Չմեռյալի այգին, որտեղ տեղադրվել էին Լևոն Թոքմաչյանի «Թմկաբերի առումը» և Գնել Բրուտյանի «Աղավաղված» հարթաքանդակները: Այստեղ էին բերվել նաև Խաչատուր Իսկանդարյանի Թումանյանական մի քանի բրոնզե քանդակներ:

Թանգարանի տնօրենը տեղեկացրեց, որ աշնանը հավանաբար կբացվի նաև Թումանյանագիտության սրահ:

Է՛, աշխարհ, աշխարհ... մի փուչ բահից ինչ, ասես, որ չի լինում:

Սանդղոյին գիտե՞ք՝ հարազատ, մոտիկ ընկեր: Ի՞նչ ընկեր, ախպեր եմք, է՛, ախպեր՝: Եղունգը կտրելիս մի քիչ խորն էր կտրել: Միրոս մոկտաց: Գնացի:

Ասում են՝ ոչ մի բան չկա, այ տղա՛, չենք ընչես, եղունգ է կի՛ր, քեզ բժիշկների ձեռք չզցցես: Մի ծանոթ ունե՞ի, ասում են, քեզ պես եղունգը խորն էր կտրել: Թեթև ցավ էր տվել: Ենթան բժիշկ գնե՞ցկալ, որ գիտես ի՞նչ եղալ, հը՞... Ինձեկցիս անցավ: Լույս դառնա հոգին...

Ասում է՛ լու՛րջ ես ասում: Ես հարցում կատակ կանե՞մ: Բայց քեզ, ասում են, ի՞նչ է եղել, հը՞... Ցույց տուր մեկին, որ հազար ուզող-չուզող չունենա: Դեռտ ի՞նչ, որ երեսդ տեսնել էն ուզում, հը՞... Մի գլուխ բամբասում են, երեսդ ծպտում, ետևիցդ բերան-

Է՛, Ա Շ Խ Ա Ր Հ, Ա Շ Խ Ա Ր Հ...

Երբ շաղ տալիս...

Անհանգստացած է ինձ նայում: Ասում են՝ այ տղա, մի փուչ բահից սիրտդ չկտրես, եղունգ է կի՛ր, կաճի՛, ամեն մի անանիմալով ի՞նչ դատի չե՛ն տալիս ու բանտ տանում, հը՞... Կարդ մի արա, դու քո ճշմարտությունը կհաստատես:

Ասում է՛ ինչ անանիմալ, ի՞նչ դատ: Ասում են՝ միամիտ ես է՛, միամիտ ես ու անհավատ: Քեզ մի բան ասել չի լինում: Դեցն դրա համար էլ քեզ մոտ գալու ճանապարհին թե ինձացած լինե՞մ, որ տղա՛յիդ ինստիտուտից վճնդել են՝ չես ասի: Կամ կներշնչես, կամ՝ չես հավատա:

Ասում է՛ եղ ի՞նչ ես ասում, ինչի՞՞ համար է՛ եղ վճնդել... Ասում են՝ առողջությունդ մի քայքա-

յիր, այ տղա, մի ներշնչիր, եղունգ է կի՛ր, մի մեծ բան չի: Շատերը շատ բան կասեն, մեկը՝ ճիշտ կասի, մեկը տուտ կասի, ես ի՞նչ գիտեմ, թե ո՞ր կինն էլ ի՞նչն էր դավաճանում, հը՞...

Ասում է՛ լու՛րջ ես ասում: Միայն պես եմք է՛, չի ասաշուն, ինձ հարցնում է՛ ճիշտ ես ասում: Ասում են մի մտածիր: Ինչ լինելու է. թող եղունգին լինի, ունեցած-չունեցածից լինի: Թե մարդու պիտի լինի՞՞ ծերերին լինի, հը՞... ջախելները մեղք են: Հինգ՝ հայրդ 105 տարեկան է... Աշխարհ է, ամեն մեկ մի ձևով գալիս-գնում ենք... Օղորդիմ հոգուն...

Ասում է՛ չլինի՞՞ որդս մի բան է պատահել: Չէ, այ մարդ, մահամեծք է, երկհ առողջանա, ու վաղը ժամը մեկին թաղումը չենք անի... մի մտածիր, նյարդերդ

Ն ք ց թ ծ ա հ է

մի՛ քայքայիր: Երբ մնացած կյանքը թող թողնե՛ր Վրա լինի, դու քեզ պիտո՞ պահիր... Բայց ու՛մ ես ասում, ձեռքդ սրտին է դրել ու «Բժիշկ, հասիր» է գոռում: Այ տղա, ասում են, ամո՞ք է, մի եղունգի համար բժիշկ կկանչե՞մ: Ուրիշ բան՝ տաքսի կանչե՞մ, միլիցիա հասե՞նք, պարզե՞նք՝ աղջիկդ իր կամքով է գնացել, թե՛ երեսու խեղքը մտել, փախցրել է Են խուլիզանը... ու՛մ ես ասում, նվարե՛ր, ուշքը գնաց... Մի կերպ ետ բերեցիք, մատը կպպեցիք, տարանք հիվանդանոց:

Սառոյն էլ լսող է պետք: Խե՛ղձ տղա, անհույս է: Ինձ արև է խլիբ: Ով գիտի ինձեկցիս անցավ, հը՞...

ՍԱՄՎԵԼ ԽԱՆԱԹՅԱՆ

Իրավապաշտպանական կենտրոն

Ու Շ Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն

Հարգելի բարեկամներ, տեղեկացնում ենք Ձեզ, որ «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթը այսուհետ հնարավորության սահմաններում պատրաստ է անվճար տպագրել հասարակական կազմակերպությունների, կրթական և առողջապահական հիմնարկների, մշակութային օջախների, այլ պետական և ոչ պետական հաստատությունների, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնությունների ակադեմիայի կազմակերպության հետ համագործակցության համար:

Ձեր հայտարարությունները:

Թերթը հրատարակվում է եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ: Երկշաբաթաթերթի բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես եվրոպական միության դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության 9 տարի
Հիմնադրի և հրատարակիչ
Հայկական սահմանադրական իրավապաշտպան
կենտրոն
ՀՀ, 2002, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ (+374 322) 2-29-87
Ֆաքս՝ (+374 322) 4-47-81
Էլ. փոստ՝ lc@acrpc.am Համացանցի էջ՝
www.acrpc.am

Անվճար իրավաբանական խորհրդակցություն

Հարգելի ընթերցող,

«Սահմանադրական օրինականության ամրապնդում մարդու իրավունքների պաշտպանության միջոցով» ծրագրի շրջանակներում ՀԱԻԿ-ը իրականացնում է **անվճար իրավաբանական խորհրդակցություն**:

Ձեզ հուզող հարցերով դուք կարող եք դիմել՝ այցելելով ՀԱԻԿ գրասենյակ, կամ դիմումներն առաքել նամակով, ֆաքսով, ինչպես նաև էլեկտրոնային փոստով՝ apapikyan@acrpc.am:

Դիմումների վերաբերյալ կտրվեն գրավոր կամ բանավոր խորհրդակցություններ, իսկ հասարակական հնչեղություն ունեցող հարցերի վերաբերյալ համապատասխան նյութեր կտպագրվեն նաև «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթում: Գրասենյակում խորհրդակցություններ մատուցվում են յուրաքանչյուր երեքշաբթի և հինգշաբթի օրերին՝ ժամը 11.30-ից 13.00: Այլ բնակավայրերից և մարզերից ժամանած քաղաքացիներին խորհրդակցություն մատուցվում է բոլոր աշխատանքային օրերին՝ երկուշաբթի-ուրբաթ, ժամը 9.30-ից 17.30: Մեր հասցեն է՝

ք. Վանաձոր, 2002,
Շիրակացի 1 նրբանցք, թիվ 2,
հեռ.՝ 0322 2-29-87,
ֆաքս՝ 0322 4-47-81,
էլ. փոստ՝ acrpc@acrpc.am, lc@acrpc.am,
apapikyan@acrpc.am

Ծրագիրն իրականացվում է
Քառնթերթաթի ինթերնեյշնլ (CPI/CASP-ի, ԱՄՆ ԱԶԳ-ի և ԳԿԾՍԿ) կազմակերպության աջակցությամբ:

Գլխավոր խմբագիր՝ Հրաչյա ՍԱՐԻՈՒՍԱՆ
Խմբագիր՝ Ալեքս Սարգսյան
Համակարգչային ձևավորող՝ Իսախանյան
(Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Մջերում կան անհղի կամ արխտապեղիս ուղևոր «Իրավական մշակույթի» պարտադիր է:

Հրատարակումների թվով ներկայությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Իրավական մշակույթ
Legal Culture
Մատուցված է
Սպասարկումը՝ 2000:
Տպագրվել է «Չափակ-97»
հրատարակչատանը: